№ 38 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21

1906

№ 38 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Պ. ԵԱ. ԱՒՍԱՐԿԻՍՕՎԻ
ԱՅԳՈՒ ԾԱՌԵՐԻ
ՏՆԿԱՐԱՆ

Ծախվում են պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակների: Հասցէն՝ ст. Скра Зак. Жел. Дор. Авсаркисову. Ցուցակը ուղարկվում է ձրիաբար:

5—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չենք ուրախացնում. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Հայ-Թուրքական համագումարը. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Հայ-Թուրքական համաժողովը և Թուրք մամուլը. Մեր ցաւերը. Քաղաքական տեսութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սպանիայում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպա և Հայաստան.

ՉԵՆ ՈՒՐԱԽԱՑՆՈՒՄ

Ներկայումս, երբ սկսվել են Թիֆլիսում հայ-Թուրքական խորհրդակցութիւնները, շատ ծանր տպաւորութիւններ են գործում մեզ վրա երկու տեսակ լուրեր, որոնք գալիս են գաւառից:

Մի կողմից մեզ վրա ծանր են ազդում այն հաղորդագրութիւնները թէ Շուշու, Զանգեզուրի և կամ Գանձակի գաւառներում ամբակոծվում են հայ գիւղեր, իսկ միւս կողմից խոր վիշտ են պատճառում այն երկպառակութիւնները, որոնք ծագել են մի քանի տեղերի հայերի մէջ, օրինակ Շուշում:

Հայ մարդը անկարող է հասկանալ թէ ինչ լօգիկայի են հետևում այն վարչական անձերը, որոնք շարունակում են ամենաեռանդուն կերպով պատժել հայերի ինքնապաշտպանական մի քանի արտայայտութիւնները, մինչդեռ այնպիսի յանցաւոր գործողներ, ինչպէս են օրինակ Մինքեանդի և Ալիկուլիքեանդի կոտորածների ղեկավարող տեղական պրիստաւը, և ուրիշ շատ չարագործներ, մնում են բոլորովին անպատիժ:

Հայ ինքնապաշտպանական գործողութիւնները միայն հակադիր մի շարժում են Թուրքերի յարձակողական գործողութիւնների դէմ: Եթէ չեն լինի վերջինները, անկասկած, չեն լինի և առաջինները: Եւ ուրեմն բոլոր ջանքերը պէտք է ուղղված լինէին դէպի այն կէտը, որ տեղի չունենային յարձակումներ Թուրքերի կողմից, իսկ հայ գիւղեր ամբակոծելը, ոչ միայն ոչ մի օգուտ չէ կարող տալ խաղաղացման գործին, այլ և կը յետաձգի նրա իրագործութիւնը աւելի ևս հեռու ժամանակի: Եւ հասկանալի է թէ ինչու: Հայ մարդը, կորցրած լինելով իր վստահութիւնը վարչական անձերի վրա և յոյս չունենալով, որ հովանաւորութիւն կը գտնէ նրանց կողմից, ամեն միջոցներ գործ է դնելու, որ դարձնալ մի որ և է կերպ պատրաստ լինի դիմադրելու Թուրքական յարձակումներին, եթէ սրանք տեղի ունենան: Եւ անկասկած՝ որքան ուշ վերականգնի վստահութիւնը դէպի վարչական անձերը և նրանց գործողութիւնները, այնքան էլ պէտք է ուշանայ խաղաղութեան վերահաստատվելը մեր գաւառներում:

Թող տեղական վարչութիւնը ինքը սկսէ զսպել ամեն մի նախայարձակ քայլ, ամեն մի ապստամբութիւն, ամեն մի աւեր, Թալան ու կոտորած, և հաւատացած կացէք, որ չի անցնի մի քանի օր և դուք կը տեսնէք, որ հայերը հանգիստ կը զգան, նրանց ուշադրութիւնը կը նուիրէն երկրագործական և ուրիշ գիւղական առօրեայ հոգսերին:

Ինչ վերաբերում է այն տխուր երեւոյթին, որ մենք յիշատակեցինք հայերի մէջ նկատվող ներքին երկպառակութիւններին, կարևոր ենք համարում ընդգծել, որ մենք ոչ միայն դէմ չենք եղել գաղափարական հակաճառութիւններին, այլ և համարել ենք նրանց անխուսափելի և նոյն իսկ օգտակար հասարակական զարգացման համար, իսկ այն երկպառակութիւնները, որոնց մասին մենք խօսում ենք, կրում են անձնական հաշիւների բնաւորութիւն, երբեմն նոյն իսկ մատնութիւնների կերպարանք և դրանով դժբաղդութիւնների վրա աւելացնում են նոր դժբաղդութիւններ:

Մենք ներկայումս կանգնած ենք շատ լուրջ հանգամանքների առաջ և պարտաւոր ենք ամեն միջոց գործ դնելու, որ չը մեծացնենք և չը բարդացնենք մեր դժբաղդութիւնները, կարելիին չափ շուտով հաստատենք խաղաղութիւն երկրի մէջ և հնարաւորութիւն տանք մեր ժողովրդին ապահովելու իր համար խաղաղութիւն՝ ամուր հիմքերի վրա:

Անձնականը և մասնաւորը պէտք է լռեն ընդհանուր շահերի առաջ: Դա չափազանց յայտնի ճշմարտութիւն է, բայց յաճախ նա մոռացվում է:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակի գեներալ-նահանգապետ Ալիֆտանը հեռագրում է Փոխարքային հետևեալը.

Գանձակ, 18 փետրվարի

Ջիվանշիրի գաւառապետի հեռագրից, որ նա ստացել է ամսի 16-ին, երևում է, թէ Թառթառ կոչված տեղում գաւառի հայ և Թուրք ներկայացուցիչների մէջ կայացել է հաշտութիւն և Թուրքերը վերադառնում են իրանց թողած գիւղերը: Հայերը թէև ոչ բոլորը, գնացին իրանց ցանքսերը դիտելու: Գաւառում բոլորովին խաղաղ է: Ոռոգող արխերի նորոգումը վերջացել է:

—

Դարալագեազ, փետրվարի 15-ին

Գաւառապետ Չերքեզովը տուեց իր հրաժարականը: Նա հեռանում է Շարուր-Դարալագեազից: Այս լուրը կայծակի արագութեամբ տարածվեց տեղիս հայ ազգաբնակութեան մէջ, որովհետև դա մի հասարակ լուր չէր, դա մի աւետիք էր, որ մարդիկ «աչքդ լոյս լինի» ասելով էին յայտնում միմեանց: Չերքեզովը 90-ական Թւականներին էլ էր վարում տեղիս գաւառապետի պաշտօնը, բայց նրան փոխեցին Նոր-Բայազէտ, որտեղից 4 տարուց յետոյ, դարձեալ փոխեցին Շարուր: Երբ նա մեկնում էր այստեղից Նոր-Բայազէտ, հետը տարաւ մի ոսկեայ սուր: Այդ սուրը գնվել էր և նուիրվել Չերքեզովին տեղիս հայ գիւղացու կոպէկներով, այն գիւղացու, որի քայքայմանը մեծ զարկ տուեց Չերքեզովը, ընկած մայիսեան օրերից: Հիմա էլ է հեռանում Չերքեզովը, բայց այս անգամ տանում է իր հետ ոչ թէ նուէր տուած ոսկէպատ սուր, այլ գաւառիս ամբողջ հայ ազգաբնակութեան ցասումի բեռները:

Ով կը յաջորդէ Չերքեզովին, առ այժմս չը գիտենք:

Անցեալ անգամ գրել էի, որ Թուրքերը պատրաստվում են հայկական գիւղերի վրա յարձակվել:

Այդպէս էլ եղաւ:

Զիրակի, Բիլակի, Իստիսուի և Ջուլի Թուրքերը, գլուխ ունենալով Գնդեվազի հասարակութեան նախկին տանուտէրի (որը այժմ բանտարկված է) որդուն, յարձակվեցին Ղուշչի-Բիլակի վրա, բայց տեսնելով հայ քաջերի ուժեղ դիմադրութիւնը, ստիպված եղան խայտառակ փախուստի դիմել: Հայերից զոհ չը կայ, Թուրքերից յայտնի չէ:

Ամսիս 5-ին, Թուրքական Սալլի գիւղում սպանեցին և դիակները անյայտացրին 1 այարցի և 2 զարագլուխցի հայերի: Ոչ մի միջոց ձեռք չէ առնված դիակները գտնելու և յանցաւորներին պատժելու: Վերոյիշեալ Սալլի գիւղը գտնվում է այստեղից Նոր-Բայազէտ տանող ճանապարհի վրա, և այդ գիւղով անցնողները յաճախ են ենթարկվում Թուրքերի յարձակման և կողոպտման:

Նոր-Բայազէտ տանող ճանապարհը վտանգված է: Անցեալ օրը, այնազուրցի Խաչատուր Զաքարեանը, որը գնում էր Նոր-Բայազէտ, այդ գաւառի Քարվանսարա գիւղի մօտ, նրա վրա յարձակվում է Թուրքերի մի զինված խումբ. վերջիններիս գնդակների տարափից ազատվելով Խաչատուրը իր յոգնած ձին բաց է թողնում, իսկ ինքը յետ է փախչում գաւառամասիս հայկական Քարագլուխ գիւղը:

Վ. Դովլաթեան

—

Շուլաւէր, Բորչալուի գաւառ, փետրվարի 18-ին.

Ներկայումս Բորչալուի Թուրք հասարակութիւնների խաւերում մեծ խռովութիւններ և տարաձայնութիւններ են ծագել, ինչպէս ասում են «իրար միս են ուտում»: Նրանք անիծում են այն օրը, երբ լսեցին «ջանբէզարներին» և անմիտ կոտորածներով երկու հարևան ազգի դժբաղդութեան պատճառ դարձան: «Ի զուր մեր անունը խայտառակեցինք, ասում է Թուրք գիւղացիական դասակարգը, ի զուր մեր վստահութիւնը և հաւատարմութիւնը կորցրինք մեր լաւ հարևան հայի մօտ, էլ ինչ երեսով նա մեզ մոխկ տայ, մեզ հետ առևտուր անի, ցորենով ու փողով մեզ օգնի, մեզ նիսիա (ապառիկ) ապրանք բաց թողնի. ուր գնանք, ոչ Թիֆլիսը մօտ կը թողնի, ոչ Շուլաւէրը. մեր որդիքը, մեր ընտանիքը քաղցած են մնացել. հիմա ինչ անենք. ամեն Թալան ու կողոպուտ մտաւ մեր «խիղճը ծախած» աղալարների ու բէգերի անյագ որկորը, մեր տաւար խելքով մեր տունը քանդեցինք, էլ չենք մտածում թէ հէնց այդ մարդիկն են իրանց հէքիաթական «տուրքերով-բահրաներով» մեզ խեղդողը, մեր կաշին քերթողը, տզրուկի նման մեր արիւնը ծծողը: Դրանք ինչով են մեզ օգնում: Բռնեցին Ամիրխանին, Շամշիին, Մամադին և մի քանիսներին բանտը նստեցրին. արդեօք նրանց դրդող այդ աղալարները նրանց ազատելու կամ նրանց Թշուառացրած ընտանիքներին պահելու համար օգնութեան հասան: Ոչ: Հայ միլքադարների վնասների համար Փադիշահի վճռած երկու միլլիոնը ո՞վ պէտք է տայ, մենք, մենք ախմախներս, թէ մեզ շահագործողները. ի հարկէ նրանք, որովհետև նրանք են օդը ապականել, նրանք էլ պարտաւոր են մաքրելու և այլն և այլն»:

Քանիցս անգամ առիթ եմ ունեցել Թուրքերի հետ խօսելու, բոլորն էլ հիմա այդ են ասում: Ամպերը կուտակվել են, մնում է նրանց ուժգին գոռգոռոցը լսել որ հաւանական է շուտով լսվի. արդէն նշանները երևում են: Այժմ Թուրք գիւղացիները արհամարհանքով են նայում իրանց աղալարներին, իբրև իրանց «խաթիշառի» մէջ գցողների և մոլորեցնողների: Արդէն մի քանի Թայֆայական կուսակցութիւններ են բաժանվել և իրար «ռեխ են կրծում»: Եւ մինչև անգամ այդ տարաձայնութիւնների շնորհիւ մի քանի Թուրքեր էլ են սպանվել, թէև աշխատում են գործին ուրիշ գոյն տալ: Այժմ Բորչալուում իրանց, Թուրքերի մէջ, գժութիւնը, վէճը, կռիւը անպակաս են: Թուրքերը բայդարեցի Մեհտի աղի գոմի վրա յարձակվել են և տաւարը քշել: Նա եկել էր Շուլաւէր բողոքելու:

Գրիգոր Բալասանեան

—

Բաղանիս, Ղազախի գաւառ, փետր. 9-ին.

Անտանելի է մեր դրութիւնը. չորս ամսից աւելի է, որ մենք մեր շորերը չենք հանում, ձիւն-բուք գիշերներին հանգստութեան կարօտ գիւղացիները դիրքերում կանգնած մարդ-գազան Թշնամուն են սպասում, մի Թշնամի, որ իր վայրենութիւններով տիեզերքի մէջ առաջինն է: Բայց իրանց էլ էժան չը նստեց. միայն 26-ի Ջողազի կռւում սայլերով դիակներ տարան. անձնազոհ կտրիճ զինւորները անմոռանալի խրատ տուին նենգ Թշնամուն:

Մեր ազգի «լինել-չը լինելու» բոյլն է. Թուրքերի երդումը, հաշտութիւնը մի կոպէկ չարժէն, այդ անուրանալի է, փաստեր շատ կան. մեր փրկութիւնը կախված է կառավարութեան անաչառ լինելուց: Գնդապետ Լեվիցկու գալու օրից սկսած մեր գաւառներում խաղաղութիւն է տիրում, միայն փետրվարի 4-ին, Կոթի երկու գիւղացիներ փայտի գնալիս՝ Թուրքերը գերել են և անյայտ է նրանց վիճակը: Գրել էի, որ Շամշադինի Ղրղի գիւղացի զինւոր Պապի Յարութիւնեանցը արձակուրդով տուն վերադառնալիս երկու ուղեկիցների հետ անյայտացան Թուրք Աքսիբարի մօտ. այժմ երեքի այլանդակած դիակները գտել են նոյն գիւղում տաւարի աղբի մէջ թաղած, գլուխները, ոտները, ձեռքերը կտրտած, փորերը ճղած, աղիքները թափած... Սայլերով բերինք հողին յանձնեցինք: Այս երկրորդ անգամն է, որ այս գիւղը այսպիսի գազանութիւններ է կատարում:

Ամսիս 7-ից սկսած Բ. մասի պրիստաւ պ. Եփիմօվը կօզակների սպայի հետ շրջելով հայ գիւղերը՝ հաւաքում է զէնքերը. հայերն էլ ուրախութեամբ տալիս են զէնքերը: Ցուցակագրելուց յետոյ պրիստաւն ասաց, որ հայերը զէնքերը իրանք Ղազախ բերեն, թող Թուրքերը մէկի մազին ձեռք տան և տեսնեն:

Պ. Եփիմօվը հրամայեց որ նորակոչ զինւորները ամսիս 10-ին Ուզունթալա լինին, որ այնտեղից գնան իրանց ծառայութեան տեղը: Հայերը կառավարութեան բոլոր հրամանները լրութեամբ կատարում են, միայն թէ շուտով խաղաղութիւնը վերականգնի:

Գնդապետ Լեվիցկին հրամայել է, որ թէ հայերը և թէ Թուրքերն իրանց գիւղերը վերադառնան, բայց շատ լաւ կը լինէր, եթէ միջնորդէիք, որ բաղաձորեցիները և կրզենցիք տեղափոխվէին Թուրք Աքսիբարայի տեղ, վերջիններն էլ հայ գիւղերը:

Մեր գիւղին մօտ է Բաղանիս այրումը, որը կատարեալ պատուհաս է ամբողջ գաւառի համար. սրանց գլխաւոր պարապմունքն է՝ գողութիւն, մարդասպանութիւն, որի համար դեռ Մեծ իշխան Միխայիլի փոխարքայութեան ժամանակ հրամայված էր ցրել զանազան գաւառներ. երեք անգամ քշել-հեռացրել, բայց դարձեալ առանց թոյլտուութեան հաւաքվել են. վերջին հրամանը պիտի կատարէր գաւառապետ պ. Արնօլդը, որին, դժբախտաբար չաջողվեց: Անհրաժեշտ է այս աւազակների որջը քանդել, որի համար հարկաւոր է, որ կալուածատէրները խնդրեն պ. գաւառապետին և ուրիշ ոչինչ:

Մելիքսեդեկ քահանայ

—

Կ. Պոլիս, 18 փետրվարի: Իփէկում վերջին օրերս եղել են խոշոր անկարգութիւններ: Ալբանացիները յարձակվել են մուֆտիի տունը պաշտպանող զօրքի վրա: Երկու կողմերից էլ կան սպանվածներ և վիրաւորվածներ: Բէգլիֆների ութ բատալիօն կարգը վերահաստատեց:

(Պետ. Գործ.)

—

Բաթում, 18 փետրվարի: Երկաթուղային նաւթային խողովակները նորոգված են: Երեք ամսեայ ընդհատումից յետոյ վերսկսվեց նաւթի հոսելը: Մօտ օրերս կը կատարվի ապրանքների տեղափոխութիւնը:

—

Ասխաբադ, 19 փետրվարի: «Асх. Листокъ»-ին հաղորդում են Մէշէդից, որ մի ամիս առաջ այնտեղ սպանվեց մի բագուեցի: Կովկասի վրէժառու շիաները ծարաւի են արիւնալի վրէժխնդրութեան: Վաղը իրանց տօնին կամենում են յարձակվել սպանողների վրա, խռովութիւն ստեղծել: Սպասվում է կոտորած—սոսկալի չափերով: Հայ ազգաբնակութիւնը սարսափով հեռանում է քաղաքից:

(Պետ. Գործ.)

—

Սաբզվարում (Պարսկաստան) Նօբելի կառավարիչը հայ է: Բագուի նաւթարդիւնաբերող-Թուրքերը, կամենալով վնասել հայերի վառելանաւթի առևտուրը և դուրս մղել նրանց Խորասանի շուկաներից, իրանց գործակալների միջոցով լուրեր են տարածում պարսկական խաւար ամբոխի մէջ, որ քրիստոնեաներից վառելանաւթ առնելը Թուրքերին արգելվում է շարիաթով: «Շախսէյ-վախսէյ»-ի սգի օրերը Խորասանում, ինչպէս ասում են, հայերի կոտորած է սպասվում: Այդ մասին արդէն յայտնված է պարսից կառավարութեանը. տեղեկութիւն է ստացել Մեշեդի ռուսաց դեսպանը, որը պէտք է կարծել ամեն միջոց գործ կը դնի առաջն առնելու, որովհետև դա կը լինի կորստաբեր թէ հայերի և թէ ռուսաց վաճառականական ու քաղաքական շահերի համար Պարսկաստանում: «Нов. Об.»

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Առաջաձոր, Ջիվանշիրի գաւառ, փետրվարի 7-ին: Երբ մի քանի օր Թուրք-հայկական ընդհարումներից լուրեր չենք լսում, կարծում ենք թէ կատարեալ խաղաղութիւն է տիրում ամեն տեղ ու ամեն մի հայ սկսում է իր մէջ ծրագիրներ կազմել՝ աշխատելու ու առհասարակ ապրելու համար ու այդ անում է նա սովորական կերպով՝ խաղաղ տարիների օրինակով, սակայն այդ ծրագիրները չեն իրագործվում, շուտ քանդվում են, որովհետև հայը դեռ ծրագիրը չը վերջացրած,—լսում է՝ թէ Թուրքերը նորից յարձակվեցին հայ գիւղերի վրա, նորից սկսվեցին կռիւները: Հայը այդ լսելով նորից ախ է քաշում ու ասում ինքն իրան. «չէ, աշխատանքի տարի չէ, հալբաթ մի կերպ կապրենք, գնանք դիրքերը բռնենք, այսպիսի տարին եթէ կարողանանք գլուխներս «սաղ» պահել, այդ էլ մեծ բան է»:

Խաղաղութեան ծարաւ հայը յոյս ունի շուտ խաղաղութիւն տեսնելու ու այնուհետև վստահ իրան «քեասիբութեանը» յետևից գնալու:

«Շուշում հաշտութիւն է կնքվել»,—ուրախացած ասում են հայերը ու նորից ապրուստի ծրագիրներ կազմում, բայց դեռ մի քանի օր չանցած, նրանք լսում են թէ Մաֆրավենդի, Ղարափիրումի ու այլ տեղերի Թուրքերը մեծ ուժով ներկայ փետրվարի 2-ին, օրը ցերեկով յարձակվել են Մարդակերտ գիւղի վրա ու տեսնելով Մարդակերտի կտրիճների, քաջերի դիրքերից և կիրճերից հերոսաբար դիմադրելը, նրանք յետ են նահանջում և մի քանի ակնթարթում անամօթաբար անհետանում, փախչում:

Թուրքերը ներկայումս իրանց բոլոր ուշքը դարձրել են մեր գաւառի երեք մեծ գիւղերի վրա. ամենից առաջ նրանք աշխատում են իւրացնելու հարուստ Մարաղան և նրա պտղաբեր հանդը ու հանդաստանը, այն Մարաղան, որը անջատված լինելով հայաբնակ լեռնային գիւղօրայքից և գտնվելով Ջիւանշիրի գաւառի տափարակում, բացառութիւն է կազմում. դրանից յետոյ Թուրքերը մտադիր են ցրիւ տալու այն Մարդակերտ հայաբնակ մեծ գիւղը, որը իր ցորենով և առհասարակ հացով կերակրում է մի քանի գաւառների բնակիչներին. ի վերջոյ գարնան սկզբներում Թուրքերը մտադիր են իրանց «մարշրուտը» ուղղելու դէպի Խաչէնի ձորակը ու ոչնչացնելու այդ հովտում իրանց համար գտնվող խոչընդոտները (գլխաւորապէս Առաջաձոր և Վանք կամ Գանձասար գիւղերը), որտեղերքով գարնանը մեծ թւով Թուրքեր են բարձրանում սարերը ու աշնանը էլի յետ դառնում:

Մենք վաղուց ենք նախազգուշակել Թուրքերի այդպիսի «կօմբինացիան» և վաղուց ենք կարողութեան չափ միջոցներ ձեռք առել չը տալու Թշնամուն մեր Թանգագին ու օգտաւէտ ծննդավայրերը: Սակայն սխալ քայլեր է, որ Թուրքերը ուզում են անել: Քանի-քանի անգամ հայերը Թուրքերի հետ հաշտված համարեցին իրանց, բայց Թուրքերը կրկին առիթներ տուին՝ նորից կռիւներ սկսեցին: Նոր նշանակված պաշտօնական մարդիկ իսկոյն հաւատում են ու սիրահարվում Թուրքերի կեղծաւոր լեզուին ու ասած սուտերին և հրամայում հայերին շուտ վերադարձնել Թուրքերից բերած Թալանները: Հարցնող չը կայ թէ՝ «ապա հայից տարած Թալանը ո՞վ պէտք է յետ տայ»: Թէ ո՞վ է Թալանողը և թէ ինչեր են Թալանված ու փչացրած... այդ մասին հարցնող չը կայ, միայն կեղծաւոր Թուրքերին հաւատալով՝ հայերից են Թալան պահանջում: Թուրքերի՝ հայերին հասցրած նիւթական վնասները շատ մեծ են, բայց հայը էլի համբերում է, էլի ուզում է խաղաղութիւն ու հաշտութիւն կնքվի, իսկ եթէ հայերի կրած վնասները Թուրքերին հասած լինէր, մի՞թէ Թուրքերը հայի նման կը համբերէին:

Ներկայումս էլ կրիտիքական մոմենտների հանդիպեցին հայ գիւղացիք. նրանք եթէ առանց զէնքի են դուրս գալիս տնից, Թուրքն է սպանում նրանց, եթէ զինված են դուրս գալիս, կօզակներն են խլում նրանցից 80—100 րուբլի արժեցող հրացանը փամփուշտներով ու կոտրատում, այն հրացանը, որի տէրը (հայը) իր անկողինն էր ծախել ու յիշեալ զէնքը գնել ինքնապաշտպանութեան համար: Եթէ կարելի լինէր երկու կողմն էլ զինաթափ անել, շատ նպատակայարմար կը լինէր, բայց դժուար թէ Թուրքերին կարելի լինի զինաթափ անել: Եթէ համեմատենք երկու տարրերը միմեանց հետ զէնք ունենալու կողմից, հայը ինչ զէնք ունի:

Հայ գիւղացիք ներկայումս սարսափի մէջ են, լսելով որ կօզակները գալու ու խուզարկելու են իրանց տները՝ զէնք բռնելու. խուզարկութեան ժամանակ իբր թէ նրանք թալանում են տները ու ծեծում բնակիչներին, ինչպէս վարվում էին անցեալ տարվայ աշնանը հայ գիւղերում, գեներալ Տակայշվիլու նշանակած անտեղի «էկզեկուցիաների» ժամանակ:

Գեներալ Գոլոշչապօվը այսօր, փետրվարի 6-ին զօրքով մեկնեց Մարտակերտից Թառթառի աւանը: Գեներալը հրամայում է գիւղօրայքում վերցնել դիրքերը: Այդ լսելով, հայ գիւղացին գուշակում է, թէ խաղաղութիւնը արդէն ընկած է, ու ապահովութիւն է, որ դիրքերը ոչնչացնել են տալիս:

Բ. Զաքարեանց

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Երէկ, երկուշաբթի, փետրվարի 20-ին, ցերեկվայ ժամը 2-ին տեղի ունեցաւ Փոխարքայի պալատում հայ-Թուրքական համագումարի բացումը, նախագահութեամբ Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովի:

Համագումարին մասնակցում են, ինչպէս արդէն յայտարարված է, 30 ներկայացուցիչներ Երևանի, Գանձակի, Բագուի նահանգների և Կարսի շրջանի հայ ազգաբնակութեան կողմից, (որից չորսը՝ հայ կաթոլիկների կողմից) և 30 ներկայացուցիչներ՝ նոյն նահանգների Թուրք ազգաբնակութեան կողմից, այն է 20 հոգի շիաներ, 10-ը սիւննիների կողմից: Բացի դրանից համագումարին մասնակցում են և պաշտօնեաներ՝ կառավարութեան կողմից:

Համագումարի կազմը հետևեալն է:

Հայերի կողմից ներկայացուցիչներն են 1) Թիֆլիսից—պ. պ. Ալեք. Քալանթար, Ալեքսանդր Մէլիք-Ազարեան, բժշկ. Կար. Ստեփանեան, բժշկ. Ալեք. Խատիսեան, և Յ. Սպենդիարեան, 1) Բագուից—պ. պ. Ա. Թաղիանոսեան, Կ. Խատիսեան, Ա. Ղուկասեան. 3) Գանձակից—պ. պ. Յովսէփ Մէլիք-Բէգլարեան, Միք. Լազարեան, Իս. Խօջայեան. և Լ. Մնացականեան 4) Երևանից—Յովհաննէս Մելիք-Ազամալեան, Լ. Մուշեղեան և Ա. Տէր-Աւետիքեան. 5) Ղազախի գաւառից—պ. Ս. Յարութիւնեան. 6) Բաթումից— պ. Սարիբէգ Յարութիւնեան. 7) Ալեքսանդրօպօլից— պ. ու Գ. Տէր-Պետրոսեան. 8) Կարսից— Եղիշէ վարդապետ Մուրադեան. 9) Նուխից— գեներալ Միլիկեան. 10) Շուլաւէրից— պ. Վախտանգ Մեհրաբեան, 11) Նախիջևանից—պ. պ. Լևոն Սարգսեան և Համբարձում Առաքելեան, 12) Շուշուց— Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեան, Ջաւադ Իշխանեան և Լևոն Ղուլեան. 13) Հայ կաթօլիկների կողմից— Գաբրիէլ վարդապետ Նահապետեան, Առաքել Սարուխանեան, Պ. Գուրգէնեան, և Պ. Կարա-Մուրզա:

Թուրքերի կողմից ներկայացուցիչներ են:

Թիֆլիսից.—Շախմալիէվ, Էմինօվ, Հուսէյն-բէկ Եդիգարօվ, Միրզաէվ, Ղաղի Սուբհանգուլիէվ, Ղաղի Մօլլա-զադէ:

Երևանից.—Աղա-խան Երիվանսկի, Աբասգուլի-բէկ Հաջիբէկօվ, պրինց Շահկուլի-Միրզա:

Նախիջևանից. — Էյնալի-բէկ Սուլթանօվ, Մահմեդ-աղա Շահթախտինսկի:

Սուրմալուից.—Ալի-աղա Ակիմօվ:

Բագուից.—Թօփչիբաշէվ, Աղայեվ, բժշկ. Ղարաբէկօվ, Հաջիէվ:

Շամախուց.—Ինժ. Ահմէդբէկօվ:

Գանձակից.—Խասմամէդօվ, Զիադխանօվ:

Շուշուց.—Նուրի-բէկ, Ջհանգիր-խան Ղալաբէկօվ, Իսմայիլ Ղուլիէվ:

Զանգեզուրից.—Ջամալ-բէկ Սուլթանօվ:

Նուխուց.—Հաջի Զալիլ:

Արեշից.—Սուլթանօվ Սուլթան-բէկ:

Ղազախից.—Գնդապետ Վէքիլօվ:

Ախալքալաքից.—Պալաւանդօվ:

Բօրչալուից.—Աբդուլ-Րահման Ախվերդի-օղլի:

Կառավարչական պաշտօնեաներ—Փոխարքայի խորհրդի անդամ՝ Պրիբիլ, Թիֆլիսի նահանգապետ Ռաուշ, Երևանի նահանգապետ Տիզենհաուզէն, դիպլօմատիական յարաբերութիւնների պաշտօնեայ գեներալ Կախանօվսկի, խորհրդի անդամ և երկրագործութեան մինիստրի լիազօր Մեդվեդև: Ներկայ էին և Փոխարքայի օգնականներ գեներալ Մալամա Սուլթան Կրիմ-Գիրեյ Շիրինսկին, դիւանապետ Պետերսօն և ուրիշ մի քանի բարձրաստիճան պաշտօնեաներ:

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Լանչխուտի, (Գուրիա): Ինչպէս տպված էր անցեալ օրվայ համարում, գնդապետ Կրըլօվ խոստացել էր Լանչխուտի բնակիչներին անվնաս թողնել թէ նրա առաջարկած բոլոր պահանջները կը կատարեն: Ժողովուրդը այդ խոստումին չէր հաւատում և ամեն րօպէ սպասում էր Թշուառութիւնների, այնպիսի դէպքերի, որպիսիք տեղի ունեցան Օզուրգէթում և Նագօմարիում: Այդպէս էլ եղաւ: Սկզբում, փետրվարի 1-ին, զօրքը այրեց Ակէթի գիւղը, (Լանչխուտի գաւ.): Փետրվարի 12-ին Լանչխուտ գիւղը եկաւ մի վաշտ զօրք. Թէպէտ աւագ օֆիցերը նոյն օրը յայտնեց ժողովրդի ներկայացուցիչներին, որ նրանք չեն եկել իբր Թշնամիներ և այլ ևս աւերումները և Թալանը տեղի չեն ունենայ, բայց այդ խոստումն էլ միայն բառեր էին:

Երկրորդ օրը, փետրվարի 14-ին նոյն Լանչխուտ գիւղը եկան 10 կօզակ և մօտ 15 ստրաժնիկ: Նրանք խուզարկեցին Սպիրիդօն Զաֆարիձէի տունը, ձերբակալեցին իրան ծերունի Զաֆարիձէին, նրա 2 աղջկան, փեսային և նրանց տունը հիւր եկած 2 կանանց. բացի դրանցից ձերբակալեցին ճանապարհին պատահած Վ. Էբրալիձէին: Փետրվարի 15-ին այդ բոլորովին անմեղ անձանց ուղարկեցին Օզուրգէթի բանտը: Յետոյ քանդեցին Զաֆարիձէի և Շալիկօ Ցինցաձէի տները: Պատճառները բոլորի համար անյայտ են: Զօրքի այս տեսակ վերաբերմունքը ժողովրդին սաստիկ վախեցրեց. չը գիտեն ինչ է սպասում իրանց դառը քրտինքով ձեռք բերած տան ու տեղին և ունեցածին:

ՄԱՄՈՒԼ

Հանրածանօթ իրողութիւն է, որ մեր երկրի մահմեդական և, գլխաւորապէս Թուրք (Թաթար) տարրը աշխատել է միշտ ամեն յարմար և անյարմար, տեղի և անտեղի առիթով շեշտել, որ նա ինքնակալական րէժիմի և կառավարութեան հաւատարիմ և հլու հպատակն ու պաշտպանն է: Հանրածանօթ է և այն իրողութիւնը, որ ռուս ժողովրդի մէջ վաղուց ծագած ազատագրական շարժումը ամենևին ոչ մի արձագանք չէր գտնում Թուրք ազգաբնակչութեան մէջ: Եւ ռուսաց հասարակութիւնն ևս նայում էր Թուրք կամ Թաթար տարրի վրա, իբրև ամենապահպանողական և րէակցիօնական տարրի վրա:

Տխրահռչակ Գոլիցինի, ինքնակալական րէժիմի և միահեծան բիւրօկրատիայի այդ ամենակատաղի ներկայացուցչի իշխանութեան օբով, այն բուլէին, երբ նա ոտնակոխ անելով ամեն մի օրէնք և արդարութիւն, հրապարակել էր հայ ժողովուրդը իբրև անլոյալ և հակապետական տարր միայն նրա համար, որ հայերը, ունենալով մարդկային իրաւունքների գիտակցութիւնը, բողոքում էին իրանց մարդկային և ազգային իրաւունքների բռնաբարութեան դէմ, թուրք ժողովուրդը ի դէմս իր ամենաինտելլիգենտ ներկայացուցիչների, պատգամաւորութեամբ ներկայացաւ Գոլիցինին և առանձնապէս շեշտեց իր անսահման հաւատարմութիւնը ռէակցիօնական ռէժիմին:

Ռուսական ազատագրական և յեղափոխական շարժման ալիքները նոյնպէս չը կարողացան հասնել Թուրք տարրին և նա շարունակեց նկատվել վստահ և ապաւէն ռէակցիայի ու մի խոնարհ, անշարժ, յետամնաց տարր:

Սակայն այժմ ռուսաց հասարակութիւնը և ազատագրական շարժման նուիրված մամուլի մի քանի օրգաններ գտնում են, որ Թուրքերի վրա կարելի է նայել իբրև «նոր դաշնակիցների վրա, ռուսաց ազատագրական շարժման մէջ»: Այդ կարծիքի է ռուս հրապարակախօս և մեզ ոչ անծանօթ Կ. Պանամարեվը, որ այդ վերնագրով մի յօդուած է տպել «Наша Жизнь» թերթի № 355 համարում, սուրթ քննելով Պետերբուրգում գումարված մուսուլմանական համագումարը: Ահա ինչ է ասում նա.

Կայսրութեան բոլոր այլացեղ ժողովուրդների մէջ մուսուլմանները ռուսական բիւրոկրատիայի համար «ամենախաղաղ» և «ամենահնազանդ» տարրն էին:

Լեհերը, վրացիները, հայերը, որոնք աչքի էին ընկնում իրանց բարձր կուլտուրականութեամբ, չէին հնազանդվում ճնշման և բռնութեան, բողոքում էին նրա դէմ բոլոր ույժերով և միջոցներով: Մուսուլմանները, որոնց վրա բիւրոկրատները նոյնպէս թափում էին իրանց հարուածները, հլու հնազանդ դնում էին իրանց վիզը լծի տակ: Թէև նրանք չէին երազում «քաղաքականութեան» մասին, բայց հայրենի ռուսիֆիկատորները նրանց վրա ևս ձեռք էին բարձրացնում: Մուսուլմանների ազգայնական և կրօնական ոչ ոքին չը խանգարող իրաւունքները ենթարկվեցին սահմանափակումների, այն է նրանց ներքին գործերի կառավարութիւնը ըստ շարիաթի և հոգևոր վարչութիւնների իրաւասութիւնները կըրճատվեցին. վակուֆային գոյքերը խլվեցին, դպրոցներից արտաքսվեց մայրենի լեզուն, ջնջվեց շատ պաշտօնների համար ընտրողական սկզբունքը, սահմանափակվեց մուսուլմանների մասնակցութեան իրաւունքը քաղաքային ինքնավարութեան մէջ, խլվեցին մուսուլմաններից հողեր և տրվեցին ռուս գաղթականներին: Մուսուլմանների վիճակը Ռուսաստանում այնքան անտանելի դարձաւ, որ նրանք «ռուսական քաղաքացիականութեան» բարիքներին գերադասեցին Աբդուլ-Համիդի ռէժիմը և խմբերով գաղթեցին Թիւրքիա,—մանաւանդ Ղրիմի թաթարները և կարաբաղցիները...

Սակայն նոյն իսկ այդ խաղաղ ելքը յանցաւոր համարվեց ռէակցիօնական մամուլի կողմից, որ աղմուկ բարձրացրեց «պանիսլամիզմի» և մուսուլմանական «սեպարատիզմի» մասին:

Անցեալ 1905 թ. փետրվարին բացված հայ-թուրքական կռիւը ռուս շովինիստներին նոր պատրուակ տուեց գոռալ պանիսլամիզմի մասին: Նրանց աղաղակները անզգուշաբար կրկնեցին հայ նացիօնալիստները, որը, սակայն, մինչեւ մի աստիճան կարելի է արդարացնել այն սարսափներով, որ կրեցին հայերը և այն զոհերով, որ տուեցին նրանք: Մի քանի մասնակի փաստերի ազդեցութեան ներքոյ նաև առաջադէմ մամուլի մի քանի օրգանները («Рус. Вѣд.») նոյնպէս տեսնում էին պանիսլամական ձգտումներ Թուրքերի յարձակման մէջ հայերի վրա: Սակայն մենք արդէն ապացուցել ենք, (տես «Провда») որ հայ թուրքական կռւի մի քանի փաստերի մէջ նկատվող իսլամական միտումները—դրսից բերված Թուրքերի մէջ պրօպագանդայի հետևանք էին, և որ երկրի աղէտի պատճառը Գոլիցինի բռնութեան, պրօվօկացիայի ռէժիմն էր: Յետագայ դէպքերը բոլորովին հաստատեցին մեր ենթադրութիւնները: Այժմ նոյն իսկ հայ նացիօնալիստները հրաժարվել են իրանց նախկին կարծիքից և միայն ռէակցիօնական մամուլը չէ հրաժարվել իր ասածներից: Յունվարին Պետերբուրգում գումարված մուսուլմանական համագումարը նոր առիթ տուեց ռէակցիօներներին յարձակվել մուսուլմանների վրա և գոռալ պանիսլամիզմի մասին, թէև մուսուլմանների ամբողջ անցեալը բոլորովին հակառակն է խօսում»:

Ապա պ. Պանամարեվը ցոյց տալով, որ թէ համագումարին, թէ զանազան պետիցիաներ և խնդրագիրներ կազմելուն մասնակցել են մուսուլմանական բուրժուազիան, ազնուականութիւնը և հոգևորականութիւնը, այսինքն հէնց այն տարրերը, որոնք ամենևին համոզված չեն որ և է յեղափոխական գաղափարով, ասում է, որ մուսուլմանութեան այդ ակտիվ տարրերը—ազնուականութիւնը, բուրժուազիան և հոգևորականութիւնը—շատ խաղաղ և լոյալ կերպով են տրամադրված Վիտտէ-Դուրնովօյի կառավարութեան վերաբերմամբ և բոլորովին գոհ են խոստացված ռէֆօրմներով: «Այդ մուսուլմանների պատգամաւորութիւնը անցեալ տարի յուլիսին հաւատացնում էր Կովկասի Փոխարքային, որ մուսուլմանները բոլորովին լոյալ են դէպի ռուսաց ինքնակալական բիւրոկրատիան և իրանց յարձակումը հայերի վրա նրանք մեկնում էին իբրև ինքնապաշտպանութեան ակտ: Նոյն պատգամաւորութիւնը հաւատացնում էր Փոխարքային «մուսուլմանների բարոյական կերպարանքի հմայքի» մասին, իսկ պ. Աղաեվը գրում էր «Կասպի» լրագրում Թուրքերի «ազգականութեան» մասին «իսկական ռուս մարդկանց» հետ և այն մասին, որ «շատ բարձր արիստոկրատական ընտանիքների վրա դրոշմված է և այժմ թաթարական ծագման կնիքը» («Կասպի» № 93—1905 թ.):

Եւ ահա—շարունակում է պ. Պանամարեվը—հէնց այդ «իսկական ռուս մարդկանց ազգականներին» Վիտտէ-Դուրնովօյի կառավարութիւնը այնքան անբարեմիտ է համարում, որ թոյլ չէ տալիս նրանց հաւաքվել և քննել իրանց գործերը: Ահա, ճշմարիտ, մի կարճատես քաղաքականութիւն:

Այդ բոլորից յօդուածագիրը այն հետևանքն է հանում, որ կառավարութիւնը իր այդպիսի սխալներով ինքն իր ձեռքով երկրի ամենապահպանողական, ամենայետամնաց տարրերը մղում է դէպի ընդդիմադրութիւն, դէպի յեղափոխութեան շարքերը, ինչպէս յայտարարեց մուսուլմանների մի խումբ:

Եւ եզրակացնում է. «եթէ մուսուլմանութեան բուրժուազական շրջանները այդպիսի եզրակացութեան են հասնում, ուրեմն ոչ մի զարմանալու բան չը կայ, որ Անդրկովկասի մուսուլման պրօլետարիատի և ինտելլիգենցիայի մէջ զարթնում է այն գիտակցութիւնը, թէ ռուսական մուսուլմանների ապագան կախված է ոչ թէ ինքնակալական բիւրոկրատիայից, այլ ռուսական ազատագրական շարժման աջողութիւնից»:

Պ. Պանամարեվի այս հաստատութիւնների դէմ շատ բան կարելի էր առարկել և հիմնաւոր բան: Առ այժմ պէտք է միայն նկատենք, որ նրա այս յօդուածը մենք համարում ենք լոկ արդիւնք նրա շատ մակերեւոյթային ծանօթութեան մուսուլման աշխարհի և կեանքի պայմանների, ինչպէս և պանիսլամիզմի հարցի մասին եղած գրականութեան հետ:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ

II

Նախորդ անգամ մեր ընթերցողներին ներկայացրինք պ. Աղայեվի՝ հայ-թուրքական համաժողովին նուիրած երկու առաջնորդող յօդուածներից մէկը: Ահա և երկրորդը:

Անցեալ համարում մենք յայտնեցինք թէ որ աստիճան մեծ և կարևոր է հայ-թուրքական համաժողովը: Մի և նոյն ժամանակ ասացինք, որ պէտք է նախ քան այդ ժողովին գնալը՝ իմանանք հակառակորդ կողմի նպատակներն ու դիտաւորութիւնները և մեր ներկայացուցիչները՝ ժողովրդի գիտութեամբ, դրա համաձայն գործ տեսնեն և այնպիսի ձևով վարվեն, որ մեր ազգին արատ չը գայ. անմեղ և ճնշված՝ յետոյ բոլոր արատները, բոլոր մեղքերը մեր վրա չը թափեն, որովհետև հակառակորդ կողմը վերին աստիճանի խելացի, ուշիմ, կանխատես, կանխահոգ՝ օժտված է և՛ ազգասիրութեամբ, և՛ միաբանութեամբ: Մի այդպիսի դրացու հետ գործ ունեցողը պէտք է որ շատ զգոյշ, շատ ուշադիր, շատ հեռատես լինի: Նախ նկատի ունենանք այն հանգամանքը, որ ժողովին պէտք է ներկայ լինեն Ռուսաստանի և Եւրոպայի ամեն կողմերից (!!!) թղթակիցներ և լրագիրները այժմեանից իրանց ականջները սրած սպասում են թէ ինչ պիտի դուրս գայ այդ ժողովից:

Ինչպէս մեր անցեալ համարում ասացինք, հակառակորդ կողմի առաջին չար դիտաւորութիւնն է մեզ մեղադրել համիսլամական ձգտումներով և աշխատել հայ-թուրքական կռիւները բացատրել այդ նպատակներով:

Համիսլամութիւն են անուանում իբրև թէ ամբողջ աշխարհում գտնվող մահմեդականներին միացնելով մի անկախ պետութիւն կազմելու միտքը: Հայ լրագիրները և նրանց համակարծիք ռուս լրագիրները, ահա քանի ամիս է այս հարցը մէջտեղ նետելով՝ պետութիւնը, ռուս ազգը մեզանից խրտնեցնում են: Այդ լրագիրների համաձայն, որպէս թէ մահմեդականները իրանց այդ նպատակը իրագործելու համար սկսել են ամենից առաջ ջնջել հայ ազգը, որ բնակվում է մահմեդական ժողովուրդների հետ խառն և դրա համար որպէս թէ օսմանցիներից և այլ մահմեդական երկիրներից իրանց հրահանգներ և օժանդակութիւն ու օգնութիւն են գալիս: Մահմեդականները հայերին ջնջելուց յետոյ, իբրև թէ պիտի յարձակվեն այնուհետև վրացիների վրա և այդ կերպով պիտի աշխատեն բնաջինջ անել բոլոր քրիստոնեայ ազգերին:

Որքան որ էլ այդ մեղադրանքները սնոտիութիւններ և պարզ զրպարտութիւններ թւան խելացի մարդկանց համար, կարող են միամիտների, տգէտների և կամ չարամիտների խաբելով՝ մահմեդականներին իսկապէս համարել տալ համիսլամական: Նոյն իսկ այս մասին «Նովօյէ-Վրեմիա»-ի նման զգոյշ լրագիրը, այս վերջին ժամանակներումս երկար բարակ մի շարք յօդուածներ գրելով՝ մահմեդականներին կասկածելի է դարձնում ռուս պետութեան և ազգի առաջ: Այդ յօդուածների հետ միասին նոյն լրագրում հայ նացիօնալիստ (միլլէթչի) հռչակաւոր Վէյմիշեվի յօդուածները հրատարակելով՝ «Նովօյէ-Վրեմիան» ինքն անձամբ մատնեց, թէ որտեղից էին բղխում այդ մեղադրանքները: Սակայն ռուս կառավարութիւնն ու ազգը չեն իմանում, թէ ինչ տեսակ մարդ է Վէյմիշեվը և հաւատում են «Նովօյէ-Վրեմիային»: Այդպէս և ուրիշ ռուս լրագիրներ: Ամեն մի լրագրում, մի հայ կանգ առնելով իր խելքին փչած մեղադրանքները բարդում է մահմեդականների վրա:

Պարզ է, որ Թիֆլիսի ժողովում նոյնպէս երևան պիտի գան այդ մեղադրանքները: Պարզ է, որ այնտեղ էլ հայերը պէտք է մահմեդականներին մեղադրեն իբրև դաւաճան, ապստամբ: Պարզ է, որ նրանց ձեռքում գտնված հարիւրաւոր (?) լրագիրները ամբողջ աշխարհին պիտի հռչակեն նրանց ասածները: Պարզ է, որ, ինչպէս առաջ, նոյնպէս այս անգամ մենք պաշտպաններ, կողմնակիցներ չը պիտի ունենանք: Լրագիրներում հայերը, պահ առ պահ պիտի թւեն իրանց մատուցած ծառայութիւնները Ռուսաստանին և պետութեան: Հրապարակ պիտի նետեն, թունդ գունաւորված՝ մահմեդականների ձեռքից, ի սէր Ռուսաստանի իրանց քաշած մինքան ցաւերը: Լորիս Մելիքօֆների, Տէր Ղուկասօֆների, Լազարեվների անունները վարագոյր շինելով՝ պիտի օգուտ քաղեն և՛ իրանց քրիստոնէութիւնից: (Այսինքն պիտի ցոյց տանք, որ մենք էլ քրիստոնեայ ենք, ռուսերն էլ. իսկ մահմեդականները «հեթանոս»):

Այժմեանից արդէն հայերը սկսել են ապացուցանել ռուսներին իրանց հաւատարմութիւնը: «Նոր-Դար»-ները Ռուսաստանը իրանց հառաչանքներով լցնում են թէ ամբողջ Ռուսաստանում հայերից աւելի կառավարութեան հաւատարիմ, հաստատամիտ հպատակ չը կայ:

Կարճ խօսքով՝ Թիֆլիսի ժողովում, հակառակորդ կողմի առաջին նպատակը մեզ համիսլամութեամբ մեղադրելով՝ կառավարութեան դաւաճան և չարակամ ցոյց տալ է և իրանց՝ հաւատարմութեամբ անբիծ դուրս բերել:

Երկրորդ չար նպատակը այն պիտի լինի, որ հայ-թուրքական ընդհարումների ամբողջ յանցանքը, ամբողջ մեղքը գցեն մեր առաջնորդների, մեր բանիմացների վրա և աշխատեն, մի կերպ անեն, որ այդ առաջնորդներին մեղապարտ դուրս բերեն կառավարութեան առաջ և դժբաղդացնեն:

Այս յօդուածի տակ նոյնպէս դրված է «շարունակելի». բայց դժբաղդաբար, թէ բարեբաղդաբար պ. Աղայեվը լսել է, թէպէտև այս վերջին յօդուածից անցաւ արդէն մի ամբողջ շաբաթ: Լաւ է գուցէ նրա համար, որ պ. Աղայեվը այնուհետև ընտրվելով ներկայացուցիչ, մահմեդականների բաղդը զգում է ապահով ու հաւատարիմ ձեռքերում: Բայց, ինչ կասկած, նա գալիս է մարտական տրամադրութիւններով: Մենք նրա տեղ ցաւում ենք անչափ: Հաշտութեան համար անկված դիւրաբէկ վրանը ոտք կոխելու նախօրէկին՝ մոռանալով մի րոպէ իր զայրացած սիրտը, դառնութիւնը, յանուն խաղաղութեան, հանդարտութեան կարօտով միացող երկու ժողովուրդների, նկատի ունենալով գոնէ մօմենտը, պ. Աղաեվ պէտք է արտասանէր, թէկուզ ակամայ, համերաշխութեան և եղբայրութեան խօսքեր:

Նա վրդովված է «Նովօյէ-Վրեմիայից»: Եւ սակայն մենք, հայերս, հայր Սուվորինի քընքուշ ու յուզիչ հոգածութիւնների առարկան լինելու դժբաղդութիւնը երբէք չենք ունեցել: Հրէաների հետ, հրէաներից յետոյ, Ռուսաստանում չը կայ մի ազգ, որ այդ գրական սողունի թունաւոր լորձունքներին ենթարկված լինի այնքան կատաղօրէն ու այնքան ամբարիշտօրէն, որքան հայ ազգը: Ընդհակառակը, մահմեդականները, և մանաւանդ դուք էիք, պ. Աղայեվ, որ սիրում էիք հարկ եղած ժամանակ գնալ և լաց լինել «Нов. Вр.»-ի էջերում:

Երէկ հրէայ ու հայ լափող Սուվորինն այսօր հաճելի է երևում մի քիչ մահմեդական ուտել: Ասացէք, խնդրեմ, մենք ինչով ենք մեղաւոր այդ զարշութեան մէջ:

Բայց հարց է թէ այդ հերոսական ծերունու ստամոքսը—որքան էլ որ զօրեղ լինի դեռ—պիտի կարողանայ մարսել ձեզ:

Աւելի քան կասկածելի է:

Իսկ ինչ վերաբերում է այն երկիւղին, թէ մենք երբեմն, երբեմն լրագրներում մեր մատուցած ծառայութիւնները թւելով մի գուցէ տոպրակը դնենք «Ռուսաստանի և պետութեան» խելքը—ն, դող մի՛ եղէք, պ. Աղայեվ. ձեր «իսկական» ծառայութիւնները վաղուց դժգունեցրել են մերինները:

Մենք մեր մինքան վատ հնչող Լորիս-Մելիքօֆներով, Տէր-Ղուկասօֆներով, Լազարեվներով և մանաւանդ, ա՜հ, այո, մանաւանդ մեր քրիստոնէութեամբ, այլ ևս, ինչպէս ֆրանսիացին ասում է, vieux jeu-ենք. մեր օրն անցաւ...

Չէ՞ որ մենք մեր սարսափելի «կոմիտետներով», ռումբերով ու դժոխային մեքենաներով «անբարեյոյս» տարր ենք, իսկ դուք ամեն տեսակ ճնշումներ կրելով հանդերձ, ամեն օր կոկորդալով հանդերձ որ «ձեր իրաւունքները հաւասարեցնեն միւս ազգերի իրաւունքների հետ»—ներկայանում էք իբրև կատարելապէս «բարեյոյս» տարր...

Բայց կարող եմ ձեզ հաւատացնել, որ մեր մտքով անգամ չէ անցնում, չենք էլ ցանկանում որ անցնէ—նախանձել ձեր փառքին...

Տ. Զաւէն

ՄԵՐ ՑԱՒԵՐԸ

Նոր-Բայազէտ փետրվարի 7-ին

Խորին ուշադրութեամբ հետևելով հասարակական ժամանակակից կեանքին, մարդ ապշում է, միտքը քարանում: Ժողովրդական կեանքը իր նորմալ դրութիւնից, իր նախկին նպաստաւոր վիճակից այժմ գլխովին կերպարանափոխվել է: Քաղաքացի թէ գիւղացի մարդը այն չէ գործում, այն չէ մտածում, ինչ, օրինակ, խորհում և գործում էր տարիներ առաջ. ժողովրդական ձեռնարկութիւնը, թողած իր տնտեսական կեանքի ապահովութիւնը, թողած իր առօրեայ ապրուստի, իր ընտանիքի պահպանելու, կերակրելու հոգատարութիւնը, մի գլուխ ջանք է գործ դնում իր գլխի մասին, ինքնապաշտպանութեան վրա մտածելու, իր գոյքի և անձի ապահովութեան մասին հոգ տանելու... Ամեն ոք, գիւղացի թէ քաղաքացի, հարուստ թէ աղքատ, ծեր թէ երիտասարդ, բոլոր — բոլորը բռնված են ինքնապաշտպանման ցաւերով... Մարդիկ, որոնք տարիներ առաջ չը գիտէին թէ ինչ է զէնքը, ինչ է հրացանը, ատրճանակը, սուրը,—այժմ նրանք են այդ գործիքներին իրանց արժանի տեղը տալիս, ինքնապաշտպանութեան միակ միջոցը համարելով նրանց: Մարդիկ, որոնք տարիներ առաջ զէնքի և հրացանի անունն անգամ չէին ուզում լսել, սրից խորշում էին, իբրև մի սպանիչ գործիքից,—այժմ այդ իսկ մարդիկ իրանք են առաջարկում, իրանք են ձգտում հրապարակի վրա դնել այդ գործիքների անունները և նրանց գործածութիւնը անհրաժեշտ դարձնելով, իրանք են պաշտում այդ սպանող գործիքներին...

Ահա տեսէք թէ վերջին հայ-թուրքական յարաբերութիւնները, մուսուլմանական այդ եղբայրասպան արիւնահեղութիւնը որ աստիճան յեղափոխութիւն առաջացրին հայ ժողովրդի կեանքում, որ աստիճան փոփոխութիւն առաջ բերին հայ հասարակութեան շրջաններում, որ ամենահեզ, փափուկ խնդիրներին սիրահար հայ-մարդը, որը տարիներ առաջ հաւի արիւն թափելուց կը ցնցվէր,—այժմ ինքն է ձգտում զէնքի ու զրահի հետ խաղալ, ինքն է քաջալերում, յորդորում ուրիշներին դիմելու ինքնապաշտպանութեան միջոցների՝ իրանց անձը փրկելու Թուրքի ու քրդի սրերից, որոնք արդէն գրեթէ բթացել են հայի գլուխը կտրելուց և փորոտիքը վեր ածելուց...

Ասածներիս իբր ապացոյց կարող եմ ասել այն պարզ իրողութիւնը, որ մեր քաղաքային վարչութեան մէջ անցեալ դեկտեմբերի 12-ին կայացած ժողովում վարչութեան մի քանի անդամներ հարց էին դրած՝ դիմելու պատշաճաւոր իշխանութեան զէնք խնդրելու՝ քաղաքի ինքնապաշտպանութեան համար: Մարդիկ, սակայն, որոնք տարիներ առաջ կատէին անշուշտ զէնքն ու զինւորումը, այժմ իբրև այսպիսի փոփոխութեան պատճառով իրանք են անհրաժեշտ գտնում զէնք ճարել և պաշտպանվել Թուրքի դէմ: Այդ հարցը քաղաքային վարչութեան մէջ քննվելով՝ վճռվեց ընտրել երկու հոգուց բաղկացած մի յանձնախումբ և վարչութեան որոշման հետ ուղարկել Երևան, գեն. նահանգապետի մօտ՝ խնդրելու թոյլ տալ արքունական զէնքերը—հրացաններ՝ ինքնապաշտպանութեան համար, ինչպէս, օրինակ, տրվում է մեր հարևան մալականներին: Ընտրվեցին վարչութեան անդամներ պ. պ. Ստ. Բաւրիկեանց և Հ. Տէր-Միքայէլեանց, որոնք այս օրերս գնալու են Երևան նահանգապետին խնդրելու: Կը յարգվի՞ մեր խնդիրը, թէ ոչ,—առ այժմ գուշակել չենք կարող:

Գ. Սիմոնեանց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՀԱՍՈՒԹԻՒՆ

Բոլոր օրգանիզմների՝ սկսած ամենատարրականներից մինչև ամենաբարդերը՝ ամենաառաջին հոգացողութիւնը ֆիզիքական գոյութեան պահպանութիւնն է: Դրանցից իւրաքանչիւրը, չը բաւականանալով պաշտպանութեան իր բնատուր յատկութիւններով, աշխատում է իրան ապահովել և այլ պայմաններով. աւելի զարգացած օրգանիզմները դրա համար համախմբվում են, կազմակերպվում, միացնում իրանց ուժերը: Այս երևոյթը աւելի աչքի է ընկնում ազգերի կամ պետութիւնների ինքնապահպանութեան գործում. սրանք էլ չը բաւականանալով սեփական ուժերով, աշխատում են իրանց համար մի կամ մի քանի թիկունք էլ ունենալ. և այսպէս էլ կը լինի միշտ՝ քանի որ կայ կուլ գնալու սոսկալի հեռանկարը: Եւ այս հեռատեսութիւնը շատ բնական է ու բաղձալի յատկութիւն:

Պատմութիւնն ու գոյաբանութիւնը ցոյց են տալիս, որ ապրում են միայն նրանք, ովքեր ուժեղ են, մենակ չեն, թև ու թիկունք կամ «ետևում մարդ» ունեն. իսկ մենակները—անտէրները կորչում են, ձուլվում—կուլ գնում:

Ինչպէս յայտնի է, այս վերջիններից—մենակներից է հայ ազգը, մի ինքնատիպ ազգ բոլոր կողմերով. առանձնայատուկ միջավայրի ու պայմանների ծնունդ լինելով՝ ամեն ինչ նրա մէջ բնորոշ է, անկախ, յաճախ ինքնուրոյն կամ «հայացրած». ուստի և նա մենակ է, կորված, ինչպէս մեր ժողովուրդն է ասում,—անտէր:

Եւ նա չէ սխալվում:

Հայը կապված չը լինելով ոչ մի ազգութեան կամ պետութեան հետ՝ ոչ ցեղագրական, ոչ էլ դաւանաբանական կապերով՝ միանգամայն կղզիացած ու մենակ է մնացել—առանձին ընկած, անտէր:

Այսպէս՝ մենք մենակ ենք եղել մեր ամբողջ պատմութեան ընթացքում՝ թէ քաղաքական և թէ եկեղեցական ասպարէզում: Պատմական այս մենակութիւնը մեզ պակաս վնաս չէ հասցրել և միշտ պատուհասել է:

Սակայն մենք շարունակ վտանգված ենք եղել ոչ միայն նրա համար, որ մենակ ազգ ենք, այլ և նրա համար, որ անտէր ենք. իսկ այս էլ շնորհիւ մեր քաղաքական տհասութեան: Իրերի քաղաքական դրութիւնը մենք յաճախ կամ լաւ չենք ըմբռնել, կամ շատ ուշ ենք ըմբռնել և մեծ մասամբ թակարդի մէջ ընկել:

Մեր ամբողջ անցեալի միօրինակ թշուառութեան պատկերը երկու բան է լրացրել. նախ այն, որ հայի բախտը բացասական յատկութիւնների տէր ազգերի հետ է կապված եղել մեծ մասամբ, և երկրորդ՝ մեր քաղաքական տհասութիւնը:

Եւ եթէ մենք քաղաքականապէս տհաս, խակ, աւելի ճիշտը՝ քաղաքականութեան անընդունակ ազգ չը լինէինք, մենք յաճախ զերծ կը մնայինք, կը խուսափէինք վերահաս պատուհասներից:

Մեր պատմութեան նոր շրջանում, վերջին հարիւրամեակում, մենք մտածված քայլ արինք ռուսաց տիրապետութիւնը հաստատելով մեր երկրում, բայց այստեղ էլ մեզ քաղաքականութիւնը պակասեց. երբ կառավարութեան վերաբերմունքը դէպի մեզ փոխվեց, մենք յամառ դիրք բռնեցինք մինչև մեր բռնաբարված ու ոտի տակ տուած իրաւունքները յետ ստանալը. իսկ այս կէտից սկսած՝ մենք սխալվեցինք, մնալով նոյնը. այստեղ պէտք է կանգ առնէինք, պէտք է փոխէինք մեր քաղաքականութիւնը:

Եթէ մինչև այդ անկարող՝ էինք նախատեսված վտանգից—հայկական ջարդից խուսափել, բայց այդ ժամանակից յետոյ կարող էինք, եթէ մի քիչ քաղաքական նրբամտութիւն ունենայինք:

Մեր ազգութիւնը հարստահարողը հին ռէժիմն էր. երբ ռէժիմի վերաբերմունքը փոխվեց դէպի մեզ, մենք էլ պէտք է փոխվէինք, բարեկամ մնալով ռուս պետութեան՝—հայ-թուրքական ընդհարումներին վերջ տալու համար:

Հայի քաղաքական տհասութեան հետևանքները բարդացնում են նաև մեր այն ազգային պակասութիւնը, որ մենք շատ յափշտակվող, ամեն բանով գրաւվող ազգ ենք, մանաւանդ նոր, մոդեռնի բաներով: Ամեն բանի ձեռք ենք պարզում, ամեն բան միանգամից մեր բաժան-բաժան ուժերով ձեռք բերել ուզում. մեր սեփական ցաւը թողած՝ ամենից առաջ ուրիշի ցաւին ենք ուզում դարման անել, յաճախ սխալվելով, որ իբր թէ դրանով մերն ենք բուժում և մոռանում, որ մինչև այդ՝ մեր ցաւը կարող է մեզ մեռցնել... Հայը գործելու տակտիկա չունի:

Նա անընդունակ լինելով գոյութեան՝ չէ կարողանում դրա համար միջոցներ հնարել, պայմաններ ստեղծել և տեղին ու ժամանակին փոխել:

Կրկնում եմ, մեր կողմից մասամբ սխալ քայլի և սխալ տակտիկայի արդիւնք էին հայ-թուրքական ընդհարումների բարդութիւններն ու երկարատևութիւնը: Որովհետև հարուածը իջնում էր, մենք այդ տեսնում էինք, զգում, սակայն մենք այդ դամոկլեան սուր համարեցինք մեր գլխավերևը կախված, որից իբր թէ խուսափել միանգամայն անկարելի էր:

Եւ մենք տուժեցինք նաև այս անհեռատեսութեան համար. մենք ժամանակին չը մտածեցինք այն ետ դարձնելու. դրա առաջը չառանք, այլ անփորձ երեխայի նման կուչ եկանք՝ մտածելով միայն՝ թէ ճրաեղին կլինէ և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

(Շարունակութիւն)

Հասկանալի է, որ ինչպիսի էլ դաշնագրեր ու յօդուածներ գրվէին, սուլթանը չէր կարող թոյլ տալ, որ իր քրիստոնեայ հպատակների մէջ գոյութիւն ունենային ինքնավարական շարժումներ. դա ազդանշան կը լինէր Թիւրքիայի կործանման և Աբդուլ-Համիդի անձնական կորստեան:[1]) Առանձնապէս վախեցնում է նրան իր միահեծան սուլթանական հեղինակութեան անկումը Փոքր-Ասիայում, այդ հայրենիք, ինչպէս անուանում է ինքը Աբդուլ-Համիդը, «պետութեան իրանի» մէջ:

Արևելքում Ռուսաստանի պատմական ախոյեան Անգլիայի օգնութեամբ՝ Աբդուլ-Համիդը ջախջախեց ռուսներին Բերլինի կոնգրէսի դիւանագիտական մրցման մէջ և թէպէտ կորցրեց Բուլղարիան ու մի քանի փոքրասիական գաւառներ, բայց և այնպէս աջողութեամբ ազատվեց բարենորոգումների դատարկ խոստումներով Հայաստանի և Մակեդոնիայի համար Եւրոպայի այն պահանջներից, որոնք ամենից աւելի վտանգաւոր էին նրա համար: Թէ մէկ և թէ միւս երկրի թշուառութիւնը լիակատար դարձնելու համար, բարենորոգումների իրականացումն և գործադրութիւնը յանձնվեցին եւրոպական պետութիւնների ընդհանուր վերահսկողութեան և այս հանգամանքը զրկեց բարենորոգումները հարկադրական ուժից ու դարձրեց Բերլինի դաշնագրի ազատարար յօդուածները մեռած տառ, որով սուլթանը խաղում է, ինչպէս ուզում է: Առևտրական մենաշնորհութիւնների, ընծաների և դիւանագիտական զիջումների պատրուակով տուած «բաքշիշների» շնորհիւ նա միշտ կարողանում է գնել մի որ և է պետութեան բարեհաճութիւնը և այդ պետութիւնը, կաշառված, համաձայնում է նրա հետ:—Մենք բարենորոգումների հարցը չենք բարձրացնի, մենք կը կը լռենք և կը պահպանենք statu quo, բայց, խնդրեմ, դուք էլ այնպէս արէք, որ ձեզանում, գոնէ արտաքուստ, ամեն ինչ խաղաղ լինի:

Սուլթանը միշտ ու անփոփոխ կերպով խոստանում է և միշտ ու անփոփոխ կերպով էլ խաբում է նոյն իսկ այդ բանում: Եւ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել: Նրա նենգաւոր խոստումների և քրիստոնեայ հպատակների խաղաղութեան միջև, ինչպէս արնախում թըշնամի, կանգնած է ամենից առաջ նրա անձնական «մեծութեան խելացնոր տենչանքը», որին կերակրելու և յագեցնելու համար նա կարօտ է դրամի. ահա սրանով նա լցնում է իր պահարանները՝ քամելով հարկերի և բազմատեսակ տուրքերի անուամբ իր ռայեայի արիւն-արտասուքը: Սուլթանին աշխատում են նմանվել նրա հաւատարիմ ծառաները, մեծից սկսած մինչև փոքրը, և այսպիսով ստեղծվում է կատարելապէս անտանելի բռնակալութեան և կազմակերպված, անհաշիւ կողոպտման մի ռէժիմ:

Աբդուլ-Համիդը հետաքրքիր մարդ է: Նա նախատեսեց համասլաւօնականութիւնից և համագերմանականութիւնից առաջանալիք վտանգը և ժամանակին, որպէս ուղղահաւատների խալիֆ, հակադրեց նրանց համիսլամական գաղափարը: Համիսլամականութեան գործակալ-քարոզիչները հեղեղեցին Կովկասը և նրանց կրօնական մոլի ու ճարպիկ քարոզչութեան արիւնոտ հետևանքները շուտով զարհուրեցրին Եւրոպայի ամենքին, ով ընդունակ է մտածելու և զգալու:

Բայց կացինը դիպաւ քարին: Սուլթանն և նրան հովանաւորող պետութիւնները մոռացել էին, որ հայերը մի որ և է աֆրիկական վայրենի ցեղ չեն, ցեղ, որ գոյութիւն է պահպանում կամ ոչնչացնվում եւրոպացիների քմահաճոյքով: Նրանք մոռացել էին, որ հայ ժողովուրդը հարուստ է պատմական աւանդներով և ազգային ինքնագիտակցութեամբ: Հայերը թոյլ չը տուին մոռացութեան մատնելու խոստացված բարենորոգումները: Նրանք անընդհատ յիշեցնում էին աշխարհին իրանց դրութիւնը տպագրական խօսքով, ցոյցերով, կամաւորների հոսանքով՝ օգնութեան հասնելու փոքր-ասիական ըմբոստներին: Այս երկու պատճառների—բարբարոս պրօվօկատորական ռէժիմի և նրա յեղափոխական դիմադրութեան—միաժամանակեայ գործունէութիւնը հասցրեց այնպիսի «խաղաղութեան», որ իր զարհուրանքով հազիւ թէ հաւասարը ունենայ մարդկային պատմութեան մէջ: 1904—96 թւականներին, սուլթանը, որ և է բարենորոգման փոխարէն, վճռեց ուղղակի ջնջել-կոտորել հայերին և այսպիսով ոչնչացնել Բերլինի դաշնագրի ձանձրացուցիչ 61-րորդ յօդուածը՝ երբ այլ ևս գոյութիւն չեն ունենայ նրանք, որոնց պէտք է նա հովանաւորէր: Կոտորածը արժանացաւ սուլթանի եւրոպական բարեկամների օրհնութեանն և բարեհաճութեանը:—«Massacrez, Majesté, massacrez». Ջարդեցէք, Վեհափառ Տէր, ջարդեցէք—Ռուսաստանի ներկայացուցիչ դեսպան Ա. Ի. Նելիդօվի այս առասպելական խորհուրդը, եթէ մինչև անգամ չարտասանվեց ի լուր, այնուամենայնիւ ճախրում էր Իլդիզ-Կիօսկի օդի մէջ ու ոգևորելով Իսլամը՝ 300,000 հայերի արեան գին դարձաւ: Յայտնի է, որ հայկական մեծ ու փոքր կոտորածների քաղաքականութիւնը աջողութեամբ գործադրվում է մինչև հիմա:

Ռուսաստանի վերաբերմունքը դէպի այդ մարդկային սպանդանոցը՝ ցաւով ու ամօթով հարկադրված ենք բնորոշել մի խօսքով,—Թոյլտուութիւն: Փորձելով ազատված Բուլղարիայի յայտնի «երախտամոռութիւնը»՝ Ռուսաստանը հրաժարվեց մերձաւոր Արևելքի քրիստոնեայ ազգութիւններին ազատարար հանդիսանալու դերից և դարձրեց քայլերը դէպի այլ ճանապարհ: Արտաքին քաղաքականութիւնից առաջացած հիասթափութիւններին միացաւ ութսունական և իննսունական թւականների ռէակցիան իր նուաճողական ծրագրով, որի համաձայն միապետութիւնը հասկացվում էր, որպէս ուղղափառութեան և ռուսականութեան նշանաբան, իսկ ռուսականութիւնը առաջարկվում էր որպէս պսակ ապագայ համասլաւօնական շէնքի: Համահաւասար ռուսացման քաղաքականութիւնը մուտք գործեց Կովկաս մի ամբողջ շարք սիստեմատիքաբար կազմակերպված ապօրինի, խիստ կարգադրութիւնների միջոցով, որոնք ուղղված էին հայերի դէմ՝ կոպիտ և յամառութեամբ գրգռող բռնութիւնների հետ միասին: Տեղական իշխանութիւնը իր կողմից բորբոքում էր կրակը և նկատելով, որ Պետերբուրգին հաւանելի է հայերի պետական յանցաւորութեան գոյութիւնը, գրգռում էր կառավարութիւնը հայերի դէմ յաճախակի կրկնվող փքուն «փաստերով»: Առանձնապէս արտասովոր դեր առաւ իր վրա այդ ողբերգութեան մէջ կառավարչապետ Գոլիցին՝ շրջապատված կիսապաշտօնական պրօվօկատորներով, ինչպիսին էր, օրինակ, հանգուցեալ Վելիչկօն: Նա սիստեմատիքաբար մղում էր Կովկասի տեղական ազգութիւնները դէպի ցեղային կատաղի պատերազմ: Առաջ յանցաւոր քարոզչութիւնը կատարվում էր մամուլի և կառավարութեան կողմից չէզոքված կեղծաւոր նախապատուութեան միջոցով, որպէս զի հայերի դէմ հանեն վրացիներին: Այդ ծրագիրը չիրագործվեց: Իննսունական թւականների վերջում, Գանձակում բացվեց մի դաւադրութիւն, գտնվեցին Աբդուլ-Համիդի կոչերը և համիսլամական շարժումը դադարեց գաղտնիք լինելուց Գոլիցինի համար: Սակայն փոխանակ հասկանալու այդ գիւտից բղխող մեծ սպառնալիքը՝ կովկասեան «քաղաքագէտ» պաշտօնեան միմիայն ուրախացաւ՝ նախատեսելով համիսլամականութեան մէջ մի ապագայ զէնք հայերի դէմ: Եւ այդ զէնքը գործի դրվեց:

Ռուս-հայկական ողբերգութեան մէջ, ըստ սովորականին, ռէժիսորի պաշտօնը կատարում էր սուլթան Աբդուլ-Համիդը: Մի ձեռքով նա ուղարկում էր դէպի Կովկաս իսլամի մոլեռանդ գործակալներին, իսկ միւսով գըրում նենգաւոր դիւանագիտական մատնութիւններ, որոնք երկիւղ էին ազդում ռուսաց դիպլօմատիական շրջանների վրա, մանաւանդ որ Աբդուլ-Համիդի համար շատ հեշտ էր ձեռաց սարքել արդարացուցիչ փոքրիկ փաստեր, որոնց կազմակերպելու մէջ նա այնքան ընտել ու վարպետ է: Ռուս-հայկական յարաբերութիւնների վատացման հարցի մէջ ահագին նշանակութիւն ունէր և ռուսաց արտաքին քաղաքականութեան կենտրոնի տեղափոխումը դէպի Ծայրագոյն Արևելք: Ռուսաստանը մոռացաւ հայկական կուլտուրական առաջապահիկ դերի պատմական նշանակութիւնը, վճռեց, թէ հայերը Մերձաւոր Արևելքում այլ ևս իրան հարկաւոր չեն ու իր պետական նաւի վրայից դուրս շպրտեց նրանց: Ռուսական գրգռիչ քաղաքականութեան խիստ և ապօրինի կարգադրութիւններին հայերը երկար ժամանակ պատասխանում էին լուռ հնազանդութեամբ: Համբերութեան բաժակը լցրեց եկեղեցական կալուածների գրաւումը,—Պետերբուրգը հարուած հասցրեց հայութեան ազգային դրօշին—Եկեղեցուն—և դրանով պարզ ցոյց տուեց, որ հայերին, իբրև ազգութիւն, նա մտադիր չէ բանի տեղ դնել ու աւելորդ քնքշութիւններ բանեցնել նրանց հետ: Եւ ամբողջ հայ ժողովուրդը բորբոքվեց միահամուռ, ակամայ և բնական զայրոյթով: Նա վառվում է, եռ է գալիս, և բանի ուժով անկարելի է հանգցնել այդ զայրոյթը:

Ռուսական քաղաքականութեան նշանաբանը Հայաստանի վերաբերմամբ դարձաւ Լօբանով-Ռօստովսկու ասածը. «Մենք երկրորդ Բուլղարիա չենք ուզում»: Այս խօսքերը, ի հարկէ, չափազանց ձեռնտու էին սուլթան Աբդուլ-Համիդին, որը իր կարգին դաւանում է «Հայաստան առանց հայերի» գաղափարը: Ռուսաց դիպլօմատիան քանդեց նրա ձեռքի կապանքները՝ իրաւունք տալով ազատօրէն գործադրելու «սրի և արեան» քաղաքականութիւնը: Յայտնի է, թէ կովկասեան իշխանութիւնը ինչպիսի խստութեամբ էր վերաբերվում դէպի հայ կամաւորները, որոնք անցնում էին սահմանը Թիւրքա-Հայաստան մտնելու: Կօզակների պահակները գնդակահար էին անում նրանց առանց դատի ու դատաստանի, ինչպէս շների: 1896 թւականի նշանաւոր գիշերներին Կ. Պօլսում՝ եւրոպական պետութիւնների դեսպանները միջամտութիւն գործելու համար սպասում էին ռուսաց դեսպանի՝ որպէս թիւրքական լծի տակ մաշվող քրիստոնեաների բնական և աւանդական պաշտպանի՝ նախաձեռնութեան: Իսկ պ. Նելիդօվը լռում էր և թշնամաբար ոչինչ չէր անում, եթէ միայն—ինչպէս դեռ մինչև այսօր համոզված են ականատես դեսպանները—չէր էլ գրգռում թիւրքերին:

Սակայն ամենից ցաւալին այն է, որ ռուսաց քաղաքական բիւրոկրատիայի այսպիսի քաջագործութիւններին աւելի քան անտարբեր վերաբերվում էր այն ժամանակ և ռուս հասարակութիւնը: Պաշտօնական և կիսապաշտօն մամուլը անխնայ հայհոյում ու ցեխն էր կոխում հայերին, որպէս անսանձահարելի սեպարատիստների և Ռուսաստանին դաւաճանողների: «Новое Время»-ն տպագրում էր երևակայական ֆելիէտօններ հայկական թագաւորութեան մասին մինչև Ռօստով-Դոնի վրա և Русскій Странникъ-ի (հանգուցեալ Ե. Լ. Կօչետովի) թղթակցութիւնները, որոնց մէջ հերքվում էին Կ. Պօլսի կոտորածի սոսկալի իրողութիւնները և թիւրքերը հռչակվում էին արդար «պետական տեսակէտից»:

Մինչև անգամ ռուս ազատամիտ շրջաններում հայերի բաղդը չէր բռնում: Միխայլովսկին այդ ժամանակ շնորհ արաւ ասելու հայ հայրենասէր Պր—սկուն, թէ նա հայերին ճանաչում է, որպէս չարչիների, իսկ Լեւ Տօլստոյը մերժեց Ջանշեանի խնդիրը և հրաժարվեց մասնակցելու նրա բարեգործական Հաւաքածուին ի նպաստ Սասունի և Փոքր-Ասիայի ուրիշ աւերված տեղերի տառապեալների:

Այս հանգամանքների մէջ զարմանալի չէ, որ հայերի աչքերն և համակրանքը, շուռ գալով Ռուսաստանից, դարձան Արևմուտքի՝ Անգլիայի կողմը: Չէ՞ որ Անգլիան ընդունել տուեց Բերլինի կոնգրէսում հայկական բարենորոգումները: Չէ՞ որ Անգլիայից էին որոտում Գլադստոնի հզօր բողոքները: Յայտնի է ամենքին, որ Անգլիան, հայկական սպանդանոցի տպաւորութեան տակ, պատրաստ էր պնդելու, որ անյապաղ իրագործվեն բարենորոգումները՝ համակարծիք և աջակից ունենալով Իտալիային: Բայց դիպլօմատիական այդ արշաւանքը քանդեց Ֆրանսիան, ի դէմս արտաքին գործերի մինիստր Հանոտոյի, որ հայկական հարցի հիմունքը խիստ վտանգաւոր համարեց ֆրանս-ռուսական դաշնակցութեան համար:

Ռուսաց դիպլօմատիայի ահագին սխալն այն էր, որ նա թոյլ չը տուեց պաշտպանել փոքր-ասիական քրիստոնեաներին եւրոպական պետութիւնների պատերազմական նաւերի—միջազգային պահակների—մշտական ներկայութեամբ Բօսֆօրում: Այսպիսով բանից դուրս էր գալիս, որ Ռուսաստանը անում է ամեն ինչ սուլթանի համար, իսկ հայերի համար—ոչինչ, ու դեռ աւելին՝ նա կարծես դաշն էր կապել սուլթանի հետ հայերի դէմ: Տպաւորութիւնը հասկանալի է: Անգլիան դարձաւ պաշտելի: Երախտագիտութեան ոգևորված ուղերձներ մէկը միւսի ետևից թռչում էին Անգլիա՝ Գլադստոնին: Իսկ ռուս մամուլը՝ հնազանդ Ասիական դէպարտամենտի ներշնչումներին՝ բղաւում-ճղաւում էր անգլիական դաւերի և հայերի դաւաճանութեան մասին:

(Կը շարունակվի)

---

* Մենք այս կէտում համաձայն չենք յարգելի հեղինակի հետ: Թիւրքահայաստանի «ինքնավարութիւնը» ոչ միայն վնաս չի բերի թիւրքական պետութեան, այլ նոյն իսկ ահագին, անգնահատելի ծառայութիւններ կը մատուցանէ նրան: Դժբաղդաբար, «խելօք» համարված սուլթան Աբդուլ-Համիդը անընդունակ է ըմբռնելու «հայկական ինքնավարութեան» մեծամեծ օգուտները, դէպի որը նա տածում է մի [illegible] մոլավարի օրգանական ատելութիւն:
Ծան. Թարգմ.

ինչ չափով կը վնասի.—մի խօսք, մենք էլի քաղաքագիտութիւն չունեցանք,—մի բան, որ մեզ միշտ պակասել է. մենք միանգամայն անընդունակ ենք դրան, իսկ մի ազգի գոյութեան համար՝ դա մեծ պակասութիւն է, նա ապրել, յառաջանալ չէ կարող, եթէ պօլիտիքական հոտառութիւն չունի, եթէ նա քաղաքական հանգամանքների ծագման դեռ սաղմին մէջ անկարող է պատճառաբանօրէն նախատեսել դրանց բարդութիւնների որակն ու քանակը, ելքն ու ուղղութիւնը իր օգտի տեսակէտից. եթէ նա այնքան տհաս է իբրև ազգ ապրելու, որ չէ կարողանում նախազուշակել՝ թէ ընդհանուր երկնակամարի վրա դիզվող ամպերը իրան ինչ պիտի տան—կարկո՞ւտ թէ անձրև:

Քանի որ մենք էլ ազգերի շղթայի մէջ մեր ինքնուրոյն տեղն ենք բռնում—նրա մի օղակը կազմում—պէտք է ուշադիր և մանրակրկիտ լինենք և հետաքրքրութեամբ ու նրբամըտութեամբ հետևենք այդ շղթայի ամեն մի շարժումներին, ամեն մի ձայնին, մեր ազգային շահերի մաշտաբին ենթարկենք և եթէ հարկաւոր լինի՝ նախօրօք մեր շահերը առաջ բերենք, նկատի ունենանք, և ոչ թէ միայն վերջը արթնանանք, միշտ էլ ուշանանք, երբ բանը բանից արդէն անցած է լինում:

Այժմ մեր հարևան Թուրքերը, որոնց շարունակ անկուլտուրական ենք կոչում, մեզնից աւելի քաղաքագէտ են. մենք նրանց կոյր պէնք ենք անուանում, բայց իրօք այս շատ էլ ճիշտ չէ. նրանք այդպէս են լոկ կառավարութեան տեսակէտից, իսկ իրանց շահերի տեսակէտից՝ նրանց այդպէս անուանել չենք կարող, որովհետև նրանք գիտեն՝ թէ ինչ են անում, նրանք օգտվում են հանգամանքից:

Իսկ մենք դեռ անգիտանում ենք այդ մեծ պակասութեան առաջ, շարունակում ենք անտարբեր մնալ և միշտ վնասվում: Մեր թշուառութեան այս կողմը, չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք նրա աստառը, մեր ուշադրութեան և զբաղման նիւթ պէտք է լինի:

Վ. Սիրա

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, փետրվարի 17-ին

Տեղական օրաթերթերի վերջին համարում հրատարակվեց երևանցի յայտնի երաժիշտ Աղամալ Մելիք-Աղամալեանցի մահը Ալէքսանդրօպօլում և նրա ամուսնու՝ տիկին Տիրուհի Մելիք Աղամալեանցի հանգուցեալի յիշատակին 500 րուբլի նուիրելը Ալէքսանդրօպօլի ազգային հաստատութիւններին: Այժմ իմ պարտքն եմ համարում յայտնել և հետևեալը: Տիկին Մելիք-Աղամալեանցը և հանգուցեալի ժառանգները յայտնեցին ինձ նրանց մօտ օրերս այցելելիս, որ նրանք որոշել են յաւերժացնել Աղամալ Մելիք-Աղամալեանցի յիշատակը և նրա ծննդավայրում, Երևան քաղաքում, կառուցանելով ս. Պօղոս և Պետրոս եկեղեցու բակում, որ կենտրոնական դիրք ունի, ս. Գայեանեան միջնակարգ օրիորդաց դպրոցին կից, մի յարմար շինութիւն, արժողութեամբ մինչև 300 ր. կանանց արհեստանոցի համար:

Այդպիսի մի հաստատութեան կարևորութիւնը հայ ընտանիքների համար ընդհանրապէս և նրանցից չքաւորների համար մասնաւորապէս այնքան ակներև է, որ դրա մասին խօսք ընդարձակելը աւելորդ եմ համարում: Մնում է միայն ցանկալ, որ տիկին Մելիք-Աղամալեանցի և նրա ազգականների բարի օրինակին հետևողներ շատ լինեն:

Վ. Եղիազարեանց

Էջմիածին փետրվարի 17-ին

Այլ և այլ տեղերից մեզ հասած լուրերից իմանում ենք, որ Ճեմարանի մասին լրագրերում տպված միակողմանի և միտումնաւոր յօդուածներից հասարակութիւնն այն սխալ եզրակացութեան է հասել, թէ Ճեմարանի ներքին կեանքը միանգամայն յուզված վիճակի մէջ է և թէ դասերը դադարեցրած են: Իրականութեան բոլորովին հակառակ այս սխալ լուրերը հերքելու համար, յարգոյ խմբագիր, թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել հետևեալը:

Ճեմարանի սովորական կարգերը, նիստն ու կացը, դասաւանդութիւնը երբեք չեն խանգարվել. մենք կանոնաւոր կերպով շարունակում ենք մեր դասերն այնպէս, ինչպէս շարունակել ենք անցեալ կիսամեակում: Առասպելներ են նոյնպէս, որպէս թէ այդ յուզումների առիթով աշակերտներ են արձակված:

Իրողութիւնն այս է: Յունվարի 11-ին աշակերտները մի գրութիւն ներկայացրին վարչութեան, որով այլ և այլ պահանջներ էին անում: Մասնագիտական և դպրանոցական բաժնի ուսուցչական ժողովները քննութեան ենթարկելով այդ գրութիւնը հետևեալ որոշումն արին. «Ժողովը որոշեց յայտնել ուսանողներին և աշակերտներին, որ նրանց գրութեան ձևն անպատշաճ է գտնում և ցաւ է յայտնում, որ նրանք մոռանալով իրանց դիրքն ու կոչումը՝ հանդիսանում են ուսուցանող ու ամբողջ հաստատութեան կանոնադիր: Ինչ վերաբերում է Ճեմարանի իրական կարիքներին, ուսուցչական խորհուրդը այդ ամէնը քննութեան կառնի՝ ի նկատի ունենալով և նրանց գրութիւնը»:

Այս վճիռը տեսչի ձեռքով յայտարարելուց յետոյ, բարեբաղդաբար աշակերտութիւնը վայելչութեան սահմանից չէ անցել և մենք կանոնաւոր կերպով շարունակել ենք և շարունակում ենք մեր գործը: Ուսուցչական խումբն էլ ամենայն լրջութեամբ զբաղված է Ճեմարանի իսկական կարիքների քննութեամբ, վերոյիշեալ որոշման համաձայն ի նկատի ունենալով և աշակերտների գրութիւնը: Քննութեան արդիւնքը վերջնական խմբագրութեան ենթարկելուց յետոյ կը մատուցվի Ն. Սրբութեան ի բարեհաճ տնօրինութիւն:

Տեսուչ Ճեմարանի՝ Գարեգին վարդապետ

Բագու, փետրվարի 12-ին

Կարդալով «Մշակի» 22-րդ համարում «Կոչ հայ հասարակութեան»-ը, ես չը կարողացայ արձագանք չը տալ այդ կոչին: Թէպէտև ինքս ծանրաբեռնված որբերով՝ ուղարկելով նամակովս 20 րուբլի, խոնարհաբար խնդրեմ գործ ածել այդ փողերը հետևեալ կարգով. հինգ րուբլին «Մշակի» համարները ինձ ուղարկելու այս յունվարի մէկից հաշուած մինչև յունիսի մէկը. հինգ րուբլին գործ ածել մի բոլորովին որբ, ընդունակ աղջիկ երեխայի համար. 3 րուբլին նրան ճաշի փող (ինչպէս յայտարարած է Մ.), իսկ երկու րուբլին այդ երեխայի շորերի, ոտնամանների և դասագրքերի համար. և եթէ այդպէս երեխայ կը գտնվի, խոնարհաբար խնդրեմ նեղութիւն քաշէք ինձ յայտնել այդ երեխայի անունը և ազգանունը և որտեղ գտնվելը. այդ տեսակ տեղեկութիւն ստանալուց՝ ես իսկոյն կուղարկեմ խմբագրութեանդ այդ երեխայի մի ամբողջ տարվայ ծախսը, այսինքն, յիսուն և հինգ րուբլի, բացի այս հինգ րուբլուց, յանձնելու Թիֆլիսի Հայոց Բարեգործ. Ընկ., վարչութեանը: Մնացած տասն րուբլին իբրև կամաւոր հարկ թուրք-մոնղոլական գազանութիւններից վնասված հայերի օգտին՝ առանց խտրութեան քաղաքների, գիւղերի և այլն:

Աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել Թիֆլիսաբնակ հայ-ղարաբաղցիների իրանց հայրենակիցներին օգնութեան գործունէութեան և պ. Լեւոն Ղուլեանցի առաջարկութեան մասին Շուշեցիների օգտին, որը արդէն իրագործված է: Լաւ, ղարաբաղցիները ղարաբաղցիների համար, շուշեցիները շուշեցիների համար, իսկ մնացած թշուառականները ծուր գնան, ծուր դիմեն, զրկված լինելով տանից, տեղից, ապրանքներից, մինչև անգամ քնելու և հագնվելու շորերից. Ինչ անեն այն թշուառ բաքուցիները, կրզանցիները, չայլուցիներ, սարովցիները և այլ և այլն, իսկ Արեշ գաւառի դժբաղդները՝ հագուստներով հաւաքված Ղայաբաշի գիւղը՝ մուրալով մի կտոր հաց և մի որ և է անկիւն՝ ցրտից պատսպարվելու. իսկ ամբողջ Զանգեզուրը, Նախիջևանի գաւառը... Ոչ, պարոններ, այդպէս չէ կարելի, թողէք այդ տեսակ նեղ, թաղիքային օգնութեան ձևը. կարիքը ծով է, իսկ օգնութիւնը կաթիլներ. այդ կաթիլներով դուք ոչինչ օգնութիւն չէք կարող անել. դա ինքնախաբէութիւն է, եթէ ոչ մի կոմեդիա: Հայ ազգը ծանր, շատ ծանր հիւանդ է, հոգեվարքի դրութեան մէջ է գտնվում: Այդ ծանր հիւանդը կարիք ունի մի շատ փորձված, հմուտ և բարի բժշկի և միայն այդ տեսակ մի բժիշկը կարող է այդ ծանր հիւանդին մահվան ճանկերից խլել:

Ո՞վ է այդ բժիշկը, կը հարցնէք դուք. իսկ ես կը պատասխանեմ. այդ բժիշկը ամբողջ հայ ազգն է, աշխարհիս որ ծայրումն էլ կը գտնվի նա: Թէպէտ պ. Լէօի կոչը մնաց առանց հետևանքի, այսինքն հարկ չը զգաց հայ ազգաբնակութեան վրա նոյն ազգը վերջնական կորուստից ազատելու համար, բայց, իմ խորին համոզմունքով, այդ անաջողութեան պատճառը հայի անտարբերութիւնը չէր դէպի իր սարսափելի վիճակը, այլ այսպէս ասած առաջնակարգ, ինտելիգենտ դասակարգերի թուլութիւնը, մասամբ էլ անտարբերութիւնը: Մարդը առհասարակ թոյլ արարած է, մինչև նրան չեն դրդում, չեն ոգևորում, մինչև նա իր կաշուի վրա չէ կրում նեղութիւնները, նա դժուար է գործի կպչում, մանաւանդ ուրիշին օգնելու գործի, իսկ մասսան ամեն տեղ, ամեն երկրում մի և նոյնն է. նրան հարկաւոր է անկեղծ, ազնիւ, առաջնորդներ, և նա հրաշքներ կարող է անել: Ուրեմն հայ ազգը չունի՞, գոնէ ներկայումս, այդպիսի գործիչներ, կը հարցնեն ինձ: Ոչ, կը պատասխանեմ ես. կան և գուցէ շատ կը ճարվեն, միայն մի բան կայ. շատերը կամ վախենալուց կամ այլ պատճառներից զրկված լռում են, սպասում են, որ ուրիշները սկսեն և յետոյ, իրանք միանան նրանց, և ահա այսպէս էլ գործ չէ սկսվում:

Բաւական է ինչքան սպասեցինք, էլ չի կարելի սպասել, պէտք է զանազան բոլոր երևոյթին խանգարիչ պատճառները դէն ձգել և գործի կպչել, և ահա ինչպէս. ամեն մի քաղաքում, գիւղաքաղաքում, գիւղում կազմել (և ինչքան կարելի է շուտ, որովհետև հիւանդը մերձ ի մահ է) ժողովներ, ընտրել գործին ընդունակ մարդիկ, բաժանել քաղաքները թաղերի և ամեն թաղից ընտրել երեք կամ հինգ մարդ (հարկահաններ), որոնք իրանց թաղի բնակիչներին աւելի լաւ են ճանաչում ամեն տեսակէտից. այդ մարդիկը կը կազմեն թաղական ժողովներ և այդ ժողովներում կը նշանակեն ամեն մի ընտանիքի կամ անհատների վրա պարտաւորեցուցիչ ամսական հարկ ըստ կարողութեան. իմ կարծիքով, օրինակ, մէկ տոկոսից մինչև հինգ տոկոսը, և այդ ոչ ոքի համար ծանր չի լինի: Եթէ մի մարդ կամ մի ընտանիք ծախսում է ամսական 50 րուբլի, նա կարող է ծախսել 49 ր. 50 կոպ., իսկ եթէ մի պարոն ամսական ստանում է հինգ հարիւր րուբլի և աւելի, նրա համար ինչ նշանակութիւն ունի, եթէ հինգ հարիւրի փոխարէն նա կծախսէ 475 ր. հաշւելով որ նա պէտք է վճարէ ամսական հինգ տոկոս իր թշուառ ազգը վերջնական կորուստից փրկելու համար:

Ո՞ւր էք հայ երիտասարդներ, ինչո՞ւ չէք ասպարէզ դուրս գալիս, մի՞թէ չէք տեսնում, որ ամբողջ հայ ազգը մահվան դուռն է, շղթայված ու աչքերը չռած ձեզ է նայում, մի՞թէ դուք կը թողնէք, որ մի ամբողջ կուլտուրական ազգ (բացի վրացիներից միայնակ կուլտուրական ամբողջ Անդրկովկասում) կորչի, ոչնչանայ երկրի երեսից: Ոչ, ես չեմ հաւատում: Դուք չէք թոյլ տալ այդ, դուք ձեր լոկ ինքնապաշտպանութեան ասպարէզը կը լայնացնէք, չը բաւականանալով զգալն—թշնամիներին յետ մղելով, դուք ձեր ձեռքը կառնէք հայ ազգին ոտքի կանգնեցնել և տնտեսականապէս: Ես հաւատում եմ հայ երիտասարդութեան լաւագոյն մասին, ոչ այն երիտասարդութեան, որը միայն հասակով է երիտասարդ, իսկ հոգով զառամեալ ծերուկ:

Կը գտնվեն մարդիկ, որոնք կասեն թէ շատերը չեն համաձայնվիլ ամսական յայտնի տոկոս վճարել իրանց եկամուտից: Ոչ, այդ սխալ է. բոլորն էլ կը համաձայնվեն և կը վճարեն, եթէ հարկահանները իրանց պաշտօնին համապատասխան և արժանի անձնաւորութիւններ լինեն: Ի հարկէ, բացառութիւններ կարող են լինել, բայց այդ բացառութիւնների դէմ կարելի է բօյկօտ սարքել բառիս ամենալայն մտքով:

Կովկասում ամենահայաշատ և ամենահարուստ քաղաքը Թիֆլիսն է Բագուից յետոյ, իսկ Թիֆլիսում կարելի է ասել համարեա գործը սկսված է, հարկաւոր է միայն, որ Թիֆլիսաբնակ ղարաբաղցիների և շուշեցիների ընտրվածները միանան և մի ընդհանուր ժողով կայացնեն և հարկահաններ ընտրեն՝ քաղաքը բաժանելով թաղերի, առանց խտրութեան թէ եկւորների և թէ բնիկների: Թիֆլիսին, յոյս ունեմ, շուտով ձայն կը տայ Բագուն, Երևանը, Մոսկվան, Նոր-Նախիջևանը և այլն:

Ես թոյլ եմ տալիս ինձ յոյս դնել, որ այս համեստ կոչը արձագանք կը գտնէ եթէ իմ ոչ ամենուրեք, գոնէ Ռուսաստանի շատ քաղաքներում, գիւղաքաղաքներում, գիւղերում, որտեղ հայեր կան, և որտեղ այդ հայերի սրտերը դեռ չեն քարացել: Սպասենք և յոյսներս չը կորցնենք:

Բժիշկ Մ. Արտեմեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան Փոխարքան Պետական Դումայի ընտրութիւնների առիթով Կովկասում, մի շրջաբերական է ուղղել փետրվարի 18-ին Կովկասի բոլոր գինուորական նահանգապետներին և վիճակների ու շրջանների կառավարիչներին, առաջարկելով յայտարարել ազգաբնակութեան մէջ Պետական Դումայի մասին եղած բոլոր կարգադրութիւնները ու կանոնադրութիւնը, և անյապաղ անել բոլոր անհրաժեշտ նախապատրաստական կարգադրութիւնները Դումայի ընտրութիւնները կատարելու համար. և նախ և առաջ առաջարկել համապատասխան հաստատութիւններին և պաշտօնական անձանց կազմել ընտրողական իրաւունք ունեցող անձանց ցուցակները, համաձայն Թագաւոր Կայսրի տուած հրովարտակի (սեպտեմբերի 18-ին և դեկտեմբերի 11-ին 1905 թ.): Մի և նոյն ժամանակ հաղորդում է, որ, իրան վերապահված իրաւունքի համեմատ, նա ընտրութիւնները կատարելու համար նշանակում է կարգադրելու ժամանակամիջոցը փետրվար ամսի 25-ը ամեն տեղ. ընտրութիւններին մասնակցելու համար խնդիրք տալու ժամանակը սկսվում է փետրվարի 25-ից և տեւում է մինչև մարտի 25-ը: Ապա անհրաժեշտ տեխնիքական կարգադրութիւնները անելուց յետոյ, առաջարկում է կառավարչական և քաղաքացիական հաստատութիւններին ու պաշտօնեաներին առանց յետաձգելու օրէնքի համաձայն կատարել իրանց վրա դըրված պարտականութիւնները, ներկայացնել որտեղ հարկաւոր է տեղեկութիւններ և առհասարակ ամեն կերպ աջակցել ընտրութիւնների շուտափոյթ և անարգել իրագործման:

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան ամսիս 19-ի արտակարգ ընդհանուր ժողովում, որ կայացաւ քաղաքային դումայի դահլիճում, որոշվեց դիմել Փոխարքային խնդրելու վերականգնել ընկերութիւնը իր նախկին ծրագրով: Ժողովի այդ որոշումը կատարելու համար ընտրվեց մի պատգամաւորութիւն, որի մէջ են մտնում հետևեալ անձինք՝ պատւաւոր անդամ ընկերութեան բժ. Բ. Նաւասարդեան, պ. Ա. Մելիք-Ազարեան, Աղ. Անանեան, վարչութեան նախագահ պ. Տ. Յովհաննիսեան, իշխանուհի Մ. Թումանեան, Ա. Խատիսեան, Գ. Սունդուկեան, Յ. Ամիրխանեան, Յ. Սպենդիարեան, Ա. Քալանթար: Բացի վերոյիշեալներից, խորհուրդին յանձնարարվեց լրացնել այդ ցուցակը ըստ իր ցանկութեան պատւոյ ներկայացուցիչներով: Երկրորդ հարցը վերաբերում էր հանգուցեալ Խուդադեանի քարվանսարայի տեղ նոր շինութիւն կառուցանելուն: Լսելով ճարտարապետ պ. Զախմախչեանի նախահաշիւը, որով պահանջվում է նոր շինութեան համար մօտաւորապէս 75—80,000 րուբլի ծախք և թէր ու դէմ կարծիքներ այն մասին, թէ ինչ աւելի յարմար է կառուցանել եկամտի տեսակէտից վերոյիշեալ տեղում, ժողովը ընտրեց մի մասնաժողով 7 հոգուց և երկու փոխանդամներից բաղկացած: Մասնաժողովի անդամներն են՝ բժ. Բ. Նաւասարդեան, Ս. Սուլխանեան, Ա. Էնֆիաջեան, Գ. Թաղէոսեան, ինժեներ Ն. Կարապետեան, Ա. Վարդապետեան և Ե. Ծատուրեան: Փոխանդամներն են՝ Բ. Բարսամեան և Գ. Յակոբեան: Մասնաժողովին իրաւունք տրվեց հրաւիրել այդ նպատակով և հմուտ անձանց խորհրդակցելու համար, պարտաւորեցնելով ներկայացնել իրանց որոշումը մինչև ապրիլի 2-ը: Վարչութեան անդամների թիւ աւելացնելու հարցը յետաձգվեց միւս ընդհանուր ժողովին:

Էջմիածնի սինօդը դիմել է կովկասեան ուսումնարանական վարչութեանը խնդրելով վերադարձնել Ալէքսանդրօպօլի իգական դպրոցի համար հանգուցեալ իշխան Արղութեան Երկայնաբազուկի կտակած 51,343 րուբլի 63 կոպ. գումարը, որը ուսումնարանի միւս գոյքի հետ միասին գրաւել էր կառավարութիւնը:

«Ցնօբիս Փուրցելի» թերթին հեռագրում են Պետերբուրգից փետրվարի 16-ին, որ պետական խորհուրդը դարձեալ հնարաւոր չը համարեց Կովկասում երդուեալների դատարան մտցնելը:

Էջմիածնի սինօդը առաջարկել է Թիֆլիսի թեմական կոնսիստորիային դատաստանով 3000 րուբլու պահանջ յայտնել Ա. Լ. Թարբօլի ժառանգներից, որովհետև այս վերջիններս մինչև այժմ դեռ չեն կատարել հանգուցեալի կամքը, որ կտակել է յիշեալ 3000 րուբլին Սևան վանքի օգտին:

Վերջին աղէտներից վնասվածների օգտին ստացանք 1) Խարբինից շտաբս-ռոտմիստր Արտաշէս Ափրիկեանից 600 ր. 2) Չիքիշլարից, սիրողների ներկայացումից օր. Նուարդ Ներսէսեանի և միւսների միջոցաւ 80 ր. 3) Թոսի ուսումնարանի (Էջմիածնի գաւառ) երկու ուսուցիչներ Կ. և Բ. Կարապետեանների ռոճկից ամսական վճար 5 ր. 50 կ.

Երէկ ցերեկվայ մօտ ժամը 12-ին Թիֆլիսի կօնտրօլի պալատի երեք պաշտօնեաներ, որոնց թւում և պաշտօնաթող փոխ-գնդապետ Մալինովսկին, պետական գանձարանից ստանալով մի մեծ գումար՝ վերադառնում էին պալատ: Վելիկօկնեաժեսկայա փողոցում երեք չարագործներ յարձակվում են յիշված պաշտօնեաների վրա՝ սպանում Մալինովսկուն և մօտ 9000 րուբլի գումար պարունակող պայուսակը յափշտակելով փախչում: Չարագործներից մէկը, ազգով իմերէլ, բռնված է:

Կիրակի, փետրվարի 19-ին նշանակված վաճառականների տարեկան ընդհանուր ժողովը՝ անդամների որոշ թիւ ներկայ չը լինելու պատճառով չը կայացաւ և յետաձգվեց մարտի 5-ին:

Կանայք ևս սկսել են վերջին ժամանակներս գողութիւններով պարապել և իրանց արհեստը գործ են դնում աւելի առևտրականների խանութներում: Այսպէս օրինակ, փետրվարի 18-ին, շաբաթ օրը երեկոյեան Երևանեան հրապարակի վրա գտնվող Բոտինեանի մանուֆակտուրային խանութը մըտաւ մաքուր հագնված մի վրացուհի և մի քանի կտորեղէն ապրանքներ տեսնելուց յետոյ գնելու պատրուակով, պատրաստվում էր հեռանալ, երբ խանութի գործակատարներից մէկը՝ հայելիների անդրադարձումից նկատելով, որ խորհրդաւոր այցելուհին երկու կտոր կերպասեղէն արագութեամբ թաքցրեց շորերի մէջը, անմիջապէս մօտեցաւ և ստիպեց տիկնոջը յետ տալու նրան: Փոքր դիմադրութիւնից յետոյ՝ ճարպիկ տիկինը ստիպված էր թոյլ տալ իրան խուզարկելու, որի ժամանակ բացի երկու գողացված կտորից, գտնվեց նրա մօտ և մի երրորդը՝ ուրիշ խանութից գողացված ժանեակեղէն կտոր: Տէրերը ապրանքը ի հարկէ յետ ստացան, իսկ յիշեալ կնոջը յանձնեցին 4-րդ քաղաքամասի ոստիկանութեանը:

Քաղաքումս ամսի 6—13-ը տեղի են ունեցել 16 դէպք սուր վարակիչ հիւանդութիւնների, կարմրուկ 2, քութէշ 2, դիֆտերիտ 10, հազ 1, (крупъ) ծաղիկ 1:

Քաղաքային վրանաբնակ հիւանդանոցում ամսիս 6—13-ը 22 հիւանդներ են եղել՝ որոնցից քութէշ 10, դիֆտերիտ 7, բծաւոր տիֆ 1, զանազան ներքին հիւանդութիւններ 4: Կանանց հիւանդանոցում եղել են 33 հոգի, ազատ տեղեր կան 22: Հոգեկան հիւանդանոցում եղել են 49 հոգի. ազատ տեղ կայ 1 հատ:

Փետրվարի 16-ին, ուրբաթ օրը երեկոյեան ժամասացութիւնից յետոյ միսիօներների եկեղեցում բռնված է մի 15 տարեկան պատանի, Ղազար Խաչատուրով անունով, որի գրպանում գտել են գրչահատ դանակ: Նրան մեղադրում են այն բանում, որ իբր թէ մըտադիր է եղել սպանել ռուս ազգասէրների պարագլուխ Գորոդեցկ քահանային: Տասներորդ քաղաքամասի վարչութիւնը հաստատում է, որ Խաչատուրովը ուղեղային հիւանդութիւն ունի:

Մարտ ամսի 1-ից «Իվէրիա» վրացերէն թերթը լոյս է տեսնելու շաբաթաթերթի ձևով:

Կովկասեան Փոխարքայի հարցին, թէ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Թիֆլիսում սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութեան տրված 500 հրացաններից և 10,000 փամփուշտներից, որքան են վերադարձրել, փետրվարի 18-ին զինարանի վարչութիւնը պատասխանել է, որ վերադարձրված է միայն 268 հրացան, իսկ փամփուշտներից և ոչ մէկը:

Կովկասեան Փոխարքայի խորհուրդին կից մօտ օրերս հիմնվելու է մի մասնաժողով որոշելու համար, թէ ամեն մի գիւղացի որքան հող կարող է գնել գիւղական հողային բանկի միջոցով:

Վերջին համառուսական պօստ-հեռագրական գործադուլը համոզեց պօստ-հեռագիրների վարչութեանը, որ կանայք արդարև ամենահաւատարիմ ծառայողներն են: Եւ, երևի, այդ հաւատարմութեան համար իբրև շնորհակալութիւն վարչութիւնը կարգադրել է, որ պօստ-հեռագրական կուրսերում ընդունվեն բացառապէս միմիայն կանայք: Այդպիսով, որոշ ժամանակից յետոյ, բոլոր պաշտօնները այդ վարչութեան մէջ կանայք կը վարեն և ոչ մի գործադուլի մասին խօսք անգամ չի կարող լինել այսուհետև:

Փետրվարի 18-ին, 5-րդ քաղաքամասի շըրջանում ոստիկանութիւնը կալանաւորեց 10 պուդ վառօդ, որը ուղարկվեց 5-րդ քաղաքամասի ոստիկանատունը:

Բարձր շրջաններում լուր է պտտում, որ փետրվարի 19-ին յայտարարվելու է նոր մանիֆէստ գիւղական հարցի մասին: («Н. Ж.»)

Ինչպէս հաղորդել էինք որ պ. Ն. Աբրահամեանը խնդրամատոյց էր եղել Թիֆլիսում հայկական գիմնազիա բանալու համար: Այժմ, ինչպէս տեղեկացել ենք, Կովկասի Փոխարքան թոյլատրել է նրան մասնաւոր հայկական գիմնազիա պետական գիմնազիաների ծրագրով: Առարկաների դասաւանդութիւնը, բացի ռուսերէն լեզուից, Ռուսաստանի պատմութիւնից ու աշխարհագրութիւնից, լինելու է հայերէն լեզուով:

Բագուի նաւթահանքի թուրք բանւորների մէջ գրագիտութիւն տարածելու նպատակով մի խումբ թուրքեր որոշել են առանձին խմբեր կազմակերպել, որոնք սկսեն պարապվել բանւորների հետ գիշերները և տօն օրերը, գլխաւորապէս ընթերցանութեամբ: Այդ նպատակով նախ հիմնվելու է խնայողական դրամարկղ, որի գումարը կազմվելու է հանգանակութեամբ: («Հէյաթ»)

«Каспій» թերթը հաղորդում է, որ Բագուի իշխանութիւնը անկարգութիւնների տեղիք չը տալու համար, արգելել է մուսուլմաններին «Շախսէյ» սգաւոր թափօրը կատարել փողոցներում: Բագուի թուրքերը որոշել են գնալ մերձակայ գիւղերը այդ ծէսը կատարելու համար:

Քաղաքային տեխնիքական մասնաժողովը քաղաքային ջրանցքի շինութիւնը ընդարձակելու համար յատկացրել է 187 հազար րուբլի:

Լուր է պտտում, որ մօտ ժամանակներս Թիֆլիսում վերացվելու է զինւորական դրութիւնը: («Н. О.»)

Լօձ քաղաքում գեներալ-նահանգապետը, սպառնալով 3000 րուբլի տուգանքով կամ 3 ամսի բանտարկութեամբ, արգելել է սովորեցնել երեխաներին տներում կամ մասնաւոր ուսումնարաններում: («Б. В.»)

Քաղաքային վարչութեան կազմած ցուցակից երևում է, որ զինւորական վարչութեան շինութիւններից քաղաքը ստանալիք ունի 400 հազար րուբլի, որոնցից 331,720 րուբլի 91 կոպ. Փոխարքայի պալատի համար, շրջանային արտիլերիական վարչութեան շինութեան համար 2453 ր. 40 կոպ., Փոխարքայի զինւորական մասի օգնականի բնակարանի՝ 5,929 ր. 81 կոպ., շրջանի զինւորական շտաբի գլխաւորի բնակարանի համար՝ 5,591 րուբլի 58 կոպ. և այլն:

Կապիտան Րիխտերի փոխարէն 4-րդ քաղաքամասի պրիստաւ է նշանակվում Նոր-Բայազէտի պրիստաւի պաշտօնակատար պ. Պօպով:

Պետերբուրգի երկրորդ արական գիմնազիայի վարչութիւնը ամենայն օր այդ գիմնազիայի աշակերտներից կասկածելիներին հեռացնում է: Փետրվարի 11-ին աշակերտներից ութ հոգու հրամայված է «առ ժամանակ» չը յաճախել, որովհետև իրանց «ջղոտ տրամադրութեան» պատճառով կարող են միւս ընկերների վրա վատ ազդել:

Մոսկվայում փետրվարի 13—14-ին կայացել է հողատէր-միապետականների համաժողովը, որոնք միանալով՝ մի կուսակցութիւն են կազմել: Այդ ժողովը, լրագիրների ասելով կայացրել է հետևեալ վճիռը. 1) Առանձին հրովարտակով կամ ուկազով անհրաժեշտ է հրատարակել, ի գիտութիւն ընդհանուրի, որ մասնաւոր մարդկանց սեփականութիւնը անձեռնմխելի է և դրանց գնելը և բաժանումը պէտք է համաձայնութեամբ լինի հողատէրերի կողմից: Այդ հրովարտակը պէտք է կարդացվի գիւղական ժողովներում և ի ցոյց դրվի շուկաների և հրապարակների վրա, որոնց մէջ պէտք է յիշատակվի, որ ամեն տեսակ բռնութեան համար հողատէրերի դէմ կամ հողերի գրաւման համար՝ պատասխանատու պէտք է լինեն գիւղերը և համայնքները. 2) Անյապաղ պէտք է իրաւունք տալ պատերազմական ժամանակի դատարանին՝ աքսորել այն գիւղացիներին, որոնք ապստամբութիւն կը քարոզեն, կը գրգռեն հաւաքական ոյժով, պայթուցիկ նիւթեր կը պատրաստեն և կամ կը պահեն իրանց մօտ. 3) Դարձնել պետութեան ուշադրութիւնը՝ քաղաքային և համայնքների հիմնարկութիւնների մէջ ծառայողների վնասակար գործունէութեան վրա: Այդ ժողովին մամուլի կողմից միայն իրաւունք էր տուած ներկայ լինել—«Моск. Вѣд.» «День», «Рус. «Дѣло.» և «Слово» յայտնի յետադէմ լրագիրների ներկայացուցիչներին:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը վերին աստիճան դըժուար դրութեան մէջ բանտերը կալանաւորվածներով լցված լինելու պատճառով. իսկ վերջիններս օր ըստ օրէ աւելանում են: Այս հանգամանքից ստիպված՝ վճռված է փետրվարի 15-ից բաց թողնել թեթև յանցանք ունեցողներին:

«Веч. Гол.» լրագրին հաղորդում են Լօնդօնից, որ այնտեղի մամուլը եռանդուն կերպով քննում է «Рус. Госуд.» լրագրի յօդուածը՝ ռուսական ֆինանսների դրութեան մասին: Լրագիրների մեծ մասը կարծում է, որ եւրօպական կապիտալիստներին արդէն առաջին նախազգուշութիւնը արած է և որ մօտիկ ապագայում՝ կարելի է սպասել Ռուսաստանի սնանկ յայտարարվելը: Լրագրութիւնը այնուամենայնիւ յոյս է յայտնում, որ եթէ Ռուսաստանը ընդունէ սահմանադրական կառավարութեան եղանակը, կարելի կը լինի փրկել նրան:

Պետական Խորհուրդի ընդհանուր նիստում փետրվարի 15-ին պիտի քննվէր տպագրութեան վերաբերմամբ լրացուցիչ կանոններ: Այդ կանոնները վերաբերում են օրէնքների վրա ուշադրութիւն չը դարձնելուն և կարրիկատուրաներ ու փորագրութիւններ հրատարակելիս՝ սահմանած կանոնները խախտելուն:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի 19-ին, երեկոյեան մօտ ժամը 9-ին, Անդրեեվսկի փողոցի վրա (Դիդուբէ) Օտտօ-Մադերի գարեջրի գործարանը մտան (բակի կողմից) 5 զինված չարագործներ և գործարանատիրոջ կրծքին մօտեցնելով սուրը, պահանջեցին փող: Մադերը չարագործներին տուեց դրամարկղի բանալին: Վերջինները վերցնելով կասսայում եղած 400 րուբլին, անյայտացան: Կողոպուտը կատարվեց գործարանի ծառայողների աչքի առաջ, բայց նրանցից ոչ մէկը չը վստահացաւ օգնել իր տիրոջը:

Փետրվարի 18-ին, երեկոյեան ժամը 8-ին, Արտիստական ընկերութեան դիմաց, անյայտ անձնաւորութիւններ էլէքտրաքարշի վագոնի տակը պետարդա էին դրել, որը պայթեց, բայց ոչ ոքի չը վնասեց:

Փետրվարի 18-ին, 5-րդ քաղաքամասի ոստիկանատուն մտաւ սանձահնարատ Մելքոն Պետրոսեան Ներսիսեանը, որը Մուխրանսկի փողոցի վրա փուռ ունի և յայտնեց, որ առաւօտեան ժամը 6-ին փուռի դուռը բաց անելիս, ներս խուժեցին 4 տղայքներ, կարճ տուժուրկաներ հագած և զինված ատրճանակներով և սրերով, գողացան կասսայից 6 րուբլի փող և արծաթէ ժամացոյց 8 րուբլի արժողութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Սահմանադրական Եւրօպայում, Գերմանիայից յետոյ, ամենից դժբաղդ, ամենից տանջված երկիրն է Սպանիան: Կղերականութեան և միլիտարիզմի լծի տակ արիւնաքամ եղած այս ժողովուրդը, իր Յոբի համբերութիւնը կորցրած՝ սկսում է բողոքել, բողոքել ոչ միայն խօսքով, այլ գործքով: Երկրում գոյութիւն ունի մի հակակառավարչական ուժեղ կուսակցութիւն, որի շարքերում կողք-կողքի կռիւ են մղում և՛ հանրապետականներ, և՛ սօցիալիստներ, և՛ անիշխանականներ, երեխայ ու երեխայամիտ Ալֆօնսի իշխանութեան դէմ: Վերևում կանգնած է եզուիտների գործիք Ալֆօնսը իր կամարիլլայով, իսկ ներքևում աշխատող ու տառապող ժողովուրդը, իր յիշեալ զանազան գոյնի ղեկավարներով: Երբեմն հարուստ ու փառահեղ Սպանիայից մնացել է միայն սուրի ու բուրվառի տիրապետութեան տակ հիւծված ազգաբնակութիւնը: Եւ ալֆօնսական խայտառակ ու սնանկ իշխանութիւնը այն աստիճան կորցրել է իր հմայքը, կեղեքող կենտրոնը այն աստիճան ուժասպառ է, որ երկրի այլ և այլ մասերը ուղղակի ձգտում են բաժանման: Ամենից ուժեղ շարժվում է Կատալոնիան, որի մայրաքաղաքում, Բարսելոնայում, բացարձակ ծաղկում է ապստամբութիւնը: Բարսելոնան արդէն հռչակաւոր է իր խիզախ ըմբոստացումներով սպանիական եզուիտ ու անգութ բիւրոկրատիայի դէմ: Քանի՜ քանի՜ անգամ արիւնը հոսել է այդ գեղեցիկ քաղաքում, որ հանգչած է Միջերկրական ափում: Վերջերս սեպարատիստ շարժումը նորից բռնկվեց Կատալոնիայում: Ժողովրդի մօտ էլ կարողութիւն չէ մնացել պարարտացնելու պարազիտ ամենակուլ աբբաներին, զինւորականութիւնը, կղերականութիւնն ու բիւրօկրատիան: Ալֆօնս թագաւորը իր հաճոյքների հետևից է, նա գուցէ երազում է մի Սպանիա, ուր «արևը մայր չէր մտնում»: Եւ աշխատում է ոյժ տալ բանակին ու նաւատորմին, ի հարկէ տառապող ժողովրդի քամակի վրա բեռնելով քայքայող ծախսերը: Եւ այդ պատճառով էլ, երկրի այն մասերը, որոնք մի արդար, ներդաշնակ, ազատամիտ վարչութեան տակ կարող էին կապված մնալ կենտրոնին, աշխատում են կտրվել, բաժանվել:

Եւ երբեմն այս ողբալի դրութեան անխուսափելի արդիւնքն է լինում ապստամբութիւնը, որը՝ բիւրօկրատիան իր առասպելական աւանդութեամբ, իր անհեռատես ու ոճրագործ անմտութեամբ աշխատել է և աշխատում է խեղդել արիւնի մէջ: Բայց, Սպանիայում, զինւորականութիւնը իր կորցրած ճակատամարտներով յոխորտացած, արտաքին թշնամու առաջից իր փախուստի վրէժն է հանում ներքին «թշնամուց». նա մի քայլ աւելի առաջ է գնում իր դաշնակից բիւրօկրատիայից: Այսպէս, երբ Բարսելոնայում ծագեցին խռովութիւններ, հայրենիքի հերոս պաշտպանները, գարնիզօնի օֆիցերները, ջարդ ու փշուր արեցին ազատամիտ մամուլի ապարանները և իրանց թոյլ տուեցին այնպիսի չափազանցութիւններ,—նրանք չը լսեցին մինչև անգամ քաղաքապետին,—որ պատերազմական մինիստր Վէյլէրը, սպանիական տիրահռչակ Դուբասովը, այն, որ իրան անմահացրել է Կուբա կղզում գործ դրած անլուր վայրագութիւններով, ինչպէս և հէնց Սպանիայում կատարած բարբարոսութիւններով,—ստիպվեց հրաժարական տալ: Նրա հետ ընկաւ և սպանական մինիստր-նախագահ Մօնտերո-Րիօսը:

Մօնտերօ-Րիօսին յաջորդեց Մօրէն, որի պաշտօնակից, պատերազմի մինիստր Լիւկը, մի ուրիշ կտրիճ, որ հպարտ է միայն իր պարտութիւններով, պահանջում է «հայրենիքի և բանակի» դէմ կատարված յարձակումները, մանաւանդ մամուլի յարձակումները յանձնել... զինուորական դատարանին:

Մարդիկը, ինչ էք ուզում, գտել են միջոցը: Կեանքը դարձնում են դժոխք և յետոյ ձեզ ասում: Ահա ձեզ դրախտ. դժգոհ էք, ապերախտներ, այն ժամանակ ձեզ հետ կը խօսենք մեր եղանակով—այսինքն գնդակներով:

Բայց ի հարկէ քաջ Լիւկի պահանջը ուրիշ բան չէ, բայց եթէ ջնջել անձի և խօսքի այն հիւծախտաւոր ազատութիւնը, որ տալիս է սպանիական սահմանադրութիւնը: Լիւկը պահանջում է պարզապէս դառնալ այն երանելի ժամանակներին, ուր Պապը միահեծան իշխում էր սրբազան Սպանիայում, և ուր սուրբ ատեանները ճագարների նման որսում էին խաղաղ քաղաքացիներին երկրի փողոցներում:

Հարց է թէ այդ արիւնոտ երազները կարո՞ղ են նորից իրագործվել: Բիւրօկրատիան արդէն պատրաստ է զոհողութիւններ անելու... անկասկած, միլիտարիզմին: Բայց չէ՞ որ զոհողութիւնն էլ մի չափ ունի. նա չի կարող իր արդէն խախուտ դիրքը բոլորովին անպաշտպանելի դարձնել ընկնելով զինուորականութեան գիրկը: Ուստի նա առաջարկում է երկուսի մէջտեղը. «յանցաւոր» լրագրերը դատել քաղաքացիական դատարանների առաջ, բայց ամբաստանող դատաւորը չլինել զինուորական, որպէս զի դատը «արագ» գնայ:

«Րէֆօրմը» սակայն այնքան էլ հեշտ չէ: Հետևաբար մինիստր նախագահ Մօրէն վճռել է գործը հանել Կորտէսների, ազգային պալատների առաջ: Արդարադատութեան մինիստր Կարսիա Պրիետօն այդ առիթով պատրաստել է մի օրինագիծ, որը կարդացվել է արդէն վերին Կորտէսում, սենատում, որտեղից պիտի գնայ յետոյ ժողովրդական պալատը:

Այս վերջինը՝ կազմված լինելով հանդերձ թագի և խորանի պաշտպաններից, հաւանականաբար խոշոր մեծամասնութեամբ մերժէ օրինագիծը, որովհետև նա խլում է սպանիական վերջին յեղափոխութիւնների պտուղը:

Վրդովված են ոչ միայն ազատական տարրերը, այլ նոյն իսկ պահպանողականները, որոնց պետը Մօրա, յայտնել է, որ պիտի ընդդիմանայ օրինագծին, որովհետև նա ծանր հարուած է հասցնում սահմանադրութեան:

Իսկ գեներալ Լիւկը դեռ ևս դժգոհ է օրինագծից...

Տ. Չ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ալժեսիրասի կոնֆերենցիան: Կոնֆէրենցիան սկսեց քննել Մարոկկոյի համար պետական բանկ հիմնելու հարցը, որի ժամանակ երևաց, որ Գերմանիայի և Ֆրանսիայի ծրագիրները ուղղակի միմեանց հակառակ են: Գերմանական ծրագիրը զուտ քաղաքական բնաւորութիւն ունի, և նրա նպատակն է ոչնչացնել այն արտօնութիւնները, որ Ֆրանսիան ունի Մարոկկոյում, Մարոկկոյի կառավարութեան հետ կապած իր նախկին համաձայնութեան շնորհիւ: Իսկ ֆրանսիական ծրագիրը, ընդհակառակը, զուտ տնտեսական է և քաղաքական ոչ մի նպատակներ չունի: «Standard»-ը ասում է, որ գերմանական կառավարութիւնը շատ սխալվում է, եթէ կարծում է, որ իր քաղաքականութեամբ կոնֆէրենցիայում կարող է խախտել անգլօ-ֆրանսիական միութիւնը: «Daily Telegraph»-ը ասում է, որ հրաշքը միայն կարող կը լինի կոնֆէրենցիային ցանկալի աջողութիւնը տալ. «Times» թերթի յատուկ թղթակիցը հեռագրում է, որ երէկ դրութիւնը կոնֆէրենցիայում յանկարծ սուր կերպարանք ստացաւ և դարձաւ կրիտիքական գերմանական բանկային գործակալի Ալժէզիրաս գալուց յետոյ: Տանենբաւմը միանգամից փոխեց իր վարմունքը և հասկացնել տուեց, որ այլ ևս չէ հետաքրքրվում կոնֆէրենցիայով: «Echo de Paris» թերթի Ալժէզիրասի թղթակից Մէվիլօն վկայում է որ պառակտումը անխուսափելի է և մի շաբթից յետոյ արդէն կոնֆէրենցիայի անդամները բանկի հարցի մասին համոզվեցին, որ Գերմանիայի և Ֆրանսիայի պահանջները հաշտեցնել անկարելի է: Գերմանիայի դէմ զայրոյթը ընդհանուր է, որովհետև նա խառնեց պետութիւններին և հարկադրեց նրանց խաղալ մի այդպիսի ողորմելի դեր: Թղթակցի ասելով, ամենքն էլ միայն մի յարմար առիթի են սպասում վերջ տալու կոնֆէրենցիայի մահման ջղաձգութիւններին:

Ֆրանսիա եւ Գերմանիա: Պարիզից հեռագրում են. «Berliner Tageblatt»-ին, որ չը նայելով ընդհանուր ծայրահեղ պեսսիմիստական տրամադրութեանը, արտաքին գործերի մինիստրութեան վերջին հաղորդագրութիւնը կազմված է բոլորովին խաղաղասիրական ոգով: Բանակցութիւնները Գերմանիայի հետ դեռ ևս ընդհատված չեն:

—Մեց քաղաքից հեռագրում են «Temps» թերթին, որ վերջին օրերս գերմանական զինւորական իշխանութիւնը բաժանում է 16-րդ զօրամասերի սպաներին և ունտէր-օֆիցէրներին 50 երեսից բաղկացած մի գիրք. «Անհրաժեշտ տեղեկութիւններ ֆրանսիական զօրքի մասին» վերնագրով: Այդ գրքում զանազան նկարներով ծանօթացնում են ֆրանսիական զօրքի հագուստի հետ, նրանց գնդերի, թնդանօթաձիգ զօրքերի և այլն կազմութիւնների մասին: Մի խօսքով այն բոլոր գիտելիքները ինչ անհրաժեշտ են իրար դէմ պատերազմ վարող երկու զօրաբանակների համար: Նոյն իսկ խօսակցութեան զանազան նախադասութիւններ գիւղացիներին հարցաքննելու համար: Բաժանված է այդ գրքից 14 և 15-րդ զօրամասերին: Բաժանուել են առհասարակ հարաւային Գերմանիայում և Վեստֆալիայում մնացող զօրքերին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 փետրվարի

ԼՕՆԴՕՆ, 17 փետրվարի։ (Րէյտէր)։ Ծովաշրջիկ Նաւի Պարսից ծոցը գնալը կապ չունի անկարգութիւններ ծագելու երկիւղի հետ և չէ ներկայացնում, որպէս բացառիկ մի դէպք՝ Բրիտանական նաւերը պարբերաբար ծոցը ներս ու դուրս են անում։—Փետրվարի 13-ին ստորագրված է Անգլիայի և Ֆրանսիայի միջև մի համաձայնութիւն, որ վճռում է Նոր-Հեբրիդեան կղզիների կառավարութեան վերաբերեալ վիճելի բոլոր հարցերը։ Ենթադրում են, թէ մօտ ապագայում համաձայնութիւն կը կայանայ Աբիսինիայի առթիւ—Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև։

ԱՍԽԱԲԱԴ, 17 փետրվարի։ Մամուլը ռուսաց Սէիստանի կօնսուլի հաղորդագրութեան հետ միասին ապացուցանում է որ ժանտախտը Սէիստանում չէ վերջացել, այլ շարունակ երևան են գալիս նոր վարակիչ հիւանդութիւններ Կարանտինական միջոցները բոլորովին բաւարարութիւն չեն տալիս։ Հիւանդանում են ըստ մեծի մասին 30 տարեկանները։ Մի քանի տեղերում մեռնում են ամբողջ ընտանիքներ։ Խօզժակուլիում մահացողների թիւը հասնում է 100$^0/_0$-ի, իսկ մնացած տեղերում, 94$^0/_0$-ի։

ՌՕՍՏՕՎ-ԴՕՆԻ ՎՐԱ, 17 փետրվարի։ Կովկասեան ոչխարապահների մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ վճռված է հիմնել ոչխարապահների ռուսաց ընկերութիւնների մի միութիւն, նպատակ դնելով աջակցել և բարելաւել ոչխարապահութիւնը։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, 17 փետրվարի։ Այսօր կայացաւ Կուբանի շրջանի հողատէրերի համագումարը։ Մասնակցողների թիւը 150-ի է հասնում։ Կազակների թիւը սակաւ է։ Առաջադրվում է քննութեան առնելու կօզակների ներկայումս օտարերկրացիներից գրաւած հողերի կապալի գների որոշման հարցը։ Վիճաբանութիւնները լինում են համեստօրէն։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 17 փետրվարի։ Նահանգապետի նախագահութեամբ կայացաւ պարագլուխների, քաղաքագլուխների և դատարանի գաւառական անդամների միացեալ ժողովը՝ քննելու համար ընտրութիւններին վերաբերվող հարցերը։ Վաղը լոյս կը տեսնի «Приднѣпровскій Курьеръ» լրագիրը, լեռնային ինժիներ Բուդկէվիչի խմբագրութեամբ։

ԲԷԼԳՐԱԴ, 17 փետրվարի։ Լուրերին նայած Թագաւորը, ցանկանալով զգուշանալ սկուպշինայի արձակելուց, մտադիր է կրկին աշխատել-համաձայնութեան բերելու արմատականների երկու ֆրակցիաներին։ Սակայն ծայրահեղ արմատականները խուսափում են անմիջական բանակցութիւններից, հետևելով իրանց առաջնորդ Պաշիչին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի։ «Собр. Узак»-ում հրատարակված է Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի մէջ կապած առևտրական դաշնագիրը։

ԵԼԻԶԱՎԷՏՕԳՐԱԴ, 18 փետրվարի։ Ջրհեղեղը մեծ վնասներ պատճառեց բնակիչներին. քաղաքի ծովափնեայ մասերը ջրասոյզ են եղած. վնասվել են նաև շուկայում վաճառողները։ Այս դժբախտութիւնը ևս առաւել զգալի է, քանի որ քաղաքը դեռ ուշքի չէ եկել հոկտեմբերեան ջարդից յետոյ։ Պարապ մարդկանց թիւը աւելանում է օրըստօրէ։ Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն։ Ջուրն իջնում է, բայց ջրափնեայ տները դեռ ևս ջրի տակն են։

ՏԱՄԵՐՖՕՐՍ, 18 փետրվարի։ Ձերբակալված են պետական բանկի կողոպտիչ խմբի երկու մարդիկ, որոնց մօտ գտնված է 13,585 ր. և 9990 մարկ։ Կասկածում են, որ այստեղ են թագնվում խմբի և մնացած անդամները։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 18 փետրվարի։ Իսապաբանդրից դէպի հարաւ, երկու մղոն հեռու, շվեդական երկրում, հաւանօրէն ռուսահպատակ չորս մարդկանց ձեռքով սպանված են երկու նամակատարներ, որոնցից գողացված է 70,000 կրօն։

ՌԻԳԱ, 18 փետրվարի։ Երեկոյեան ժամի 5-ին, Ֆէլզէրի գործարանը ներս խուժեցին մաուզէրներով զինված 12 մարդիկ։ Երկիւղ տալով գանձապահին և գրասենեկապետուհուն, չարագործները հանեցին փողի արկղից 7311 րուբլի, որից յետոյ խումբը ցրվեց, արձակելով՝ պատահմամբ անցնող ու բաղանիք գնացող զինուորների վրա. մէկ զինուոր թեթև վիրաւորված է, իսկ կողոպտիչներից մէկին բռնեցին կազակները, երկուսին վիրաւորեցին։

Կ. ՊՈԼԻՍ, 18 փետրվարի։ Իպէկում արնաուտներն ապստամբվեցին։ Շարունակ ընդհարումներ են լինում զօրքերի հետ, որոնց թիւը $5^1/_2$ բատալիոն է։ Ենթադրում են, որ խաղաղութիւնը շուտով կը վերականգնվի։

ՀՌՕՄ, 18 փետրվարի։ «Տրիբունը» հաղորդում է, թէ՝ մօտիկ ապագայում կայանալիք Աբիսինիայի վերաբերեալ, Անգլիայի ու Իտալիայի միջև կօնվենցիայի ստորագրութեան լուրը կանխաժամանակեայ է։ Բանակցութիւնները դեռ շարունակվում են. բոլորի ցանկութիւնն է գործը վճռել բարեհաճ կերպով։

ՊՕՐՏՍՄՈՒՏ, 18 փետրվարի։ Երեկոյեան Թագաւորը անցաւ «Վիկտորիա Ալբերտ» զբօսանաւը։ Փետրվարի 18-ի առաւօտեան Թագաւորը մեկնելու է Շերբուրգ։

ԼՕՆԴՕՆ, 18 փետրվարի։ (Րէյտէր)։ Լօրդմերը հանգանակութիւն բացեց Նեապօլիայի քաղցած բնակիչների օգտին։

ԼՕՆԴՕՆ, 18 փետրվարի։ «Ստանդարտին» հաղորդում են Տօկիօյից, որ մինիստրութիւնը առաջարկում է մասնաւոր երկաթուղիները հինգ տարվայ ընթացքում յետ գնելու և պետութեան սեփականութիւնը դարձնելու մի նախագիծ։ Այս նախագիծը ի կատար ածելու համար հաշվում են 40 միլ. ֆունտ։ Արտաքին գործերի մինիստր Կատօն հրաժարական տուեց, որովհետև համաձայն չէր մնացած անդամների արած առաջարկութիւնների հետ այն օրէնքի գործադրութեան վերաբերմամբ, որով օտարերկրացի ռուս փախստական զինուորները յետ են ուղարկվում, չը նայած որ որոշված է, որ օրէնքը չը գործադրվի քաղաքական փախստականների վերաբերմամբ, և որը արգելում է կանանց մնալ Անգլիայում գտնվող իրանց ազգականների հետ։ Չը նայելով, որ ներկայացրել են պահանջված հինգ ֆունտ ստերլինգը, բայց չեն թոյլատրել վերադառնալ այն զինուորներին, որոնք Ռուսաստանում բանտարկված են եղել վեց ամսով քաղաքական յանցանքների համար։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 18 փետրվարի։ Պէնսիլվանիա նաւով հասան 2000 ռուս գաղթականներ։ Այս թիւը անհամեմատ մեծ է ցերեկվայ եկամուտներից։ Անցեալ տարի այստեղ եկան աւելի քան 15000 հրէայ գաղթականներ, որոնցից 6000-ը բնակվեցին Նիւ-Եօրկում։

ԼՎՕՎ, 18 փետրվարի։ (Բիւրօյի Թղթակ.)։ Շնորհիւ ռէկտորի և մի քանի պրօֆեսօրների միջամտութեան, համալսարանի խաղաղութիւնը վերականգնվեց։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ 18 փետրվարի։ Ընտրողներին ուղղած նամակում Բանֆին խորհուրդ է տալիս՝ վճռել ունգարական զօրքի հարցը—1867 թ. որոշման հիման վրա, պահանջում է տալ Ունգարիային անկախութիւն մաքսային հարցում, կրճատել տնտեսական ընդհանուր դրութիւնը Աւստրիայի հետ։ Բանֆին ասում է, որ անհրաժեշտ է միութիւն ստեղծել Թագաւորի և ազգի միջև, տալ լիակատար հաւասարութիւն Աւստրո-Ունգարիայի երկու մասին էլ, ներքին գործերի մինիստրն առաջարկեց ադմինիստրացիային՝ ուժով ժողովել պահեստի անհնազանդ զինուորներին։

ՊԱՐԻԶ, 18 փետրվարի։ Պատգամաւորների ժողովում զինուորական բուդժէտի քննութեան ժամանակ, Օֆֆրէն՝ Կիւրնօյի գործի առիթով ծագած վէճի ժամանակ, մեղադրում է Ժօրէսին ուխտադրուժ լինելու մէջ։ Ժօրէսը Օֆֆրէին անուանում է խղճուկ, զարշելի եղուկ։ Բարձրանում է սոսկալի աղմուկ, ժողովը ընդհատվում է։ Ժօրէսն և Օֆֆրէ առաջարկեցին իրանց սեկունդանտներին։ Օֆֆրէ և Ժօրէսի սեկունդանտները գտնելով, որ այն խօսքերը, որ ուղղեցին միմեանց բեմից պարլամենտական պօլեմիկայի միջնադէպքի պատճառ են դառնում, վճռեցին, որ հիմք չը կայ մենամարտելու։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ, 19 փետրվարի։ Դատաստանական պալատը հաստատեց գրաքննիչի որոշումը՝ յարգռնիս գրաւելու «Կրիմ» լրագրի համարները։ Խմբագիրը մեղադրվում է 129 յօդ՝ հիման վրա։

ԽԱՐԿՕՎ, 18 փետրվարի։ Իրաւաբանական ֆակուլտէտի դէկանը իրաւաբանական ընկերութեան նախագահը, դադարեցրած «Міръ» լրագրի իսկական խմբագիրը դատապարտված են բանտարկութեան 10 օրով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի։ Նորին Մեծութիւնները իրանց Օգոստափառ դուստրների հետ ընդունեցին Սուրբ Հաղորդութիւնը։ Իվանօվօ-Վօզնէսենսկ քաղաքի միապետական կուսակցութեան պատգամաւորութեան ընդունելութեան ժամանակ Թագաւոր Կայսրը բարեհաճեց դիմել պատգամաւորութեան հետևեալ խօսքերով. «Գիտեմ և գնահատում եմ ձեր զգացմունքները։ Սրտանց շնորհակալ եմ ձեզանից և յանձին ձեր բոլոր ինքնակալ-միապետական կուսակցութեան։ Յայտնեցէք ձեզ լիազօրութիւն տուողներին, որ այն բարենորոգումները, որ Ես տուեցի հոկտ. 17-ի մանիֆէստով, կիրականանան անփոփոխ, և այն իրաւունքները, որոնց Ես տուի հաւասարապէս ազգաբնակութեան—անբառնալի են։ Իսկ ինքնակալութիւնը կը մնայ այնպէս, ինչպէս եղել է հնում։ Շնորհակալ եմ ձեր հաւատարմութեան համար»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 փետրվարի։ Ներքին գործերի մինիստրը առաջադրում է կոմս Սօլսկու նախագահութեամբ կազմած խորհրդին՝ քննութեան առնել Պետական Դումայի ընտրութիւնները կատարելու համար կանոնների գործադրութիւնը։ Աստրախանի և Ստաւրապօլի նահանգների թափառական օտարազգիները ընդունում են երկու ներկայացուցիչ Պետական Դումայի համար, մէկը ներքին օրդայի ղրղիզներից, միւսը՝ Աստրախանի և Ստաւրապօլի սահմաններում ապրող և թափառող կալմիկներից։

ԼՕՆԴՕՆ, 18 փետրվարի։ Միջազգային դրութեան նուիրած յօդուածում «Ստանդարտ»-ը ասում է, որ եթէ Ֆրանսիայի և Գերմանիայի վէճը խաղաղ կերպով վճռվի և ռուս կառավարութիւնը ընդունակ լինի հեռացնելու խռովութիւնը, այն ժամանակ Ռուսաստանը կարող է Պարիզում մեծ փոխառութիւն կապել. Ֆրանսիան հիմնական պատճառներ ունի օգնել Ռուսաստանին՝ վերականգնելու նրա հեղինակութիւնը Եւրոպայում։ Լրագիրը համոզված է, որ ռուս փոխառութիւնը կաջողվի այն ժամանակ միայն, եթէ հորիզոնը կը մաքրվի ամպերից և խաղաղութիւնը Ռուսաստանում չի խախտվի։ Եթէ թոյլ տրվի ժողովրդին մասնակցութիւն ունենալ պետութեան կառավարութեան գործին, Ռուսաստանը կը հզօրանայ և կը հարստանայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 փետրվարի։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը հեռագրով հրամայեց բոլոր երկաթուղային վարչութիւններին՝ ձեռք առնել եռանդուն միջոցներ չը պահելու ապրանքների պահեստները։—Ներքին գործերի մինիստրը նորից թոյլատրեց սահմանադիր-ռամկավարական ժողովներ գումարել։

ՕՉԱԿՕՎ, 19 փետրվարի։ Այսօր դատարանի վճռով մահվան պատժի է դատապարտված կախաղանի միջոցով, Շմիտը, Ջաստնիկ կօնդուկտորը, Անտոնենկօ կօմանդօրը և մեքենավար Գլադկովը հրացանի են բռնվելու։ Եալինինը և Ուլյանսկին անդարձ աքսորման, չորս հոգի—քսան տարվայ աքսորի, երկուսը 15 տարով, 1-ը 12 տարով, 3-ը 10 տարով, 3-ը 6 տարով, 2-ը 4 տարով, պատժական բաժնում 4—2 տարի—9 հոգի, արդար են ճանաչված 10 հոգի։ Վճիռը վերջնականապէս կը հրատարակվի երեքշաբթի օրը «Պրուտ» նաւում։ Պաշտպանողները վճռաբեկ գանգատ են ներկայացնելու։ Նրանք խնդրում են արձանագրութեան մէջ մտցնել 4 հանգամանքներ, որոնցից 2-ը վերաբերում են դատի իրական կողմին, 2-ը ձևականին։ Արդարացածները ազատ թողվեցին, մնացածները տարված են «Պրուտ» նաւը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 19 փետրվարի։ Գեներալ-նահանգապետը Մարիուպօլում փակեց ժողովրդական ուսուցիչների ընկերութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 փետրվարի։ Պաշտօնական։ Մինիստրների խորհրդի փետրվարի 17-ի նիստը շարունակեց քննել այն աւելի անյետաձգելի միջոցները, որ առաջարկում է ագրարային հարցը։ Խորհուրդը վերջնականապէս կանգ առաւ այն մտքերի վրա, թէ պէտք է հիմնել տեղական նահանգական և գաւառական յանձնաժողովները պաշտօնատար անձերից, միացնելով նրանց հետ զէմստվոների և գիւղացիների ներկայացուցիչներին նահանգապետի նախագահութեամբ կենտրոնացնելով գործունէութեան ընդհանուր ղեկավարութիւնը և ուղղութիւնը կենտրոնական հիմնարկութեան մէջ։ Յանձնաժողովի առաջիկայ նպատակը լինելու է աջակցել գիւղացիական հողային բանկին։ Այս խորհուրդը դիմելով—երկրի քաղաքական ներքին դրութեան ընդհանուր գնահատման հետ միասին,—այն միջոցների քննութեան, որոնցով կարելի է պահպանել հանգստութիւնը, գլխաւորապէս վերջ դնել ագիտացիային, որի նպատակն է ագրարային անկարգութիւններ ստեղծել, անհրաժեշտ համարեց միջոցներ գտնել ադմինիստրատիւ եղանակով բանտարկված անձանց գործերին ընթացք տալու համար։ Այս խորհուրդը քննութեան առաւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի գրութիւնը, որով մինիստրը միջնորդում էր բոլորովին փակել երկաթուղիների ապրանքային կայարանները, բոլոր կիրակի և տօն օրերը, ընդունելով այդ միջոցը ոչ-ցանկալի ժողովրդական տնտեսութեան տեսակէտից անցողական բնաւորութիւն ունեցող միայն, մինիստրների խորհուրդը այդ գրութեան վերաբերվեց բացասական կերպով։

20 փետրվարի։

ԽԱՐԲԻՆ, 19 փետրվարի։ Փետրվարի 17-ին «Харб. Листокъ» լրագիրը փակված է։ Նրա փոխարէն տեսնող «Մանջուրիա»-ն նոյնպէս փակված է։ Երկաթուղիների երթևեկութիւնը խանգարվեց։ Ապրանքներ չեն տեղափոխվում։ Չեն ուղարկվում արագ և պոստային գնացքներ։ Պակասութիւն է զգացվում տաքացնելու և տեղափոխման միջոցների մէջ։ Արհեստանոցները և դէպօն համարեա չեն աշխատում։ Յունվարին ձերբակալված են դաշնակցական կօմիտէտի 30 անդամներ, որոնց թւում երկաթուղային բարձր ծառայողներ։ Շուտով զինուորական դատարան կը լինի։ Պահեստի զօրքի առաքումը կատարվում է դանդաղ. գեներալ Լենէվիչին և Կուրօպատկինին յարգանքով ճանապարհ դրին։ Նոր հրամանատար Գրօդէկովը կրճատում է պաշտօնեաների ցուցակները։ Նրա կառավարութիւնը կենտրոնած է Խարբինում։

ՏՕԿԻՕ, 19 փետրվարի։ Մինիստր նախագահ Սայօնին ժամանակաւորապէս ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան կառավարութիւնը, պաշտօնից հեռացած Կատօի փոխարէն։

ԿԻԵՎ, 19 փետրվարի։ «Свобода и Правда» լրագրի խմբագիր Նուչէնկինը մեղադրվում է 129 յօդածով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի։ Լրագիրներն ասելով Պետական Խորհրդի գործունէութիւնը իր ներկայ կազմով, վերջանալու է մարտի 15-ին. նոր խորհրդի նիստը, կազմված 98 ընտրեալ և 98 նշանակված անդամներից, կայանալու է մարտի 27-ին։ Լրագիրների լուրերին համեմատ, մամուլը լրացուցիչ կանոնների վերաբերեալ վիճաբանութիւնները շատ տաք բնաւորութիւն ունեն Պետական խորհրդում։ Կանոնները ընդունվեցին 50—60 ձայնով, ընդդէմ 10—16-ի։ Կայսրի հաստատութեան կը ներկայացնվի մեծամասնականների կարծիքը, և փոքրամասնականների առանձին հայեացքը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 19 փետրվարի։ Երկաթուղային կամրջի վրա ծանր վիրաւորված է արտելշչիկը, որ փող էր տանում բաժանելու բանւորներին։ Գողացված է 9000 ր. չարագործները անյայտացան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի։ Ֆինանսական մինիստրութեան կից խորհուրդը քննեց այն հրամանները որոնցով գործադրվելու է Պետական «Պրոմեսլային» անուանված հարկի համար որոշած նոր օրէնքը։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը վճռեց պարապմունքներ սկսել հաղորդակցութեան ճանապարհների ինժեներների ինստիտուտում։ Առևտրի մինիստր Տէմիրեազովը ընտանեկան պատճառներից ստիպված արձակվում է ծառայութիւնից, իսկ նրա տեղ ժամանակաւորապէս լինելու է որպէս մինիստրի օգնական Ֆեօդորովը, մնալով իր պաշտօնում։ Պետական զինուորական խորհուրդը աւարտեց նոյեմբերի 2-ի մամուլի վերաբերեալ ժամանակաւոր կանոնները լրացնելու քննութիւնը։

ՕԴԵՍԱ, 19 փետրվարի։ Զինուորական դատարանը քննեց Կերեյօվ, Ելենա, Նայդա, Դաւիդօվ գիւղացիների գործերը, որոնք մեղադրվում էին անիշխանականների և կօմունիստների ռազմիկ խմբին պատկանելու և պայթուցիկ նիւթեր պատրաստելու մէջ, նպատակ դնելով մահվան փորձ անելու յուլիսի 30-ին Կօխանօվ և Կարանգօզով գեներալների և քաղաքապետ Նէյդգարդի կեանքի դէմ։ Դատարանը դատապարտեց Կերեյօվին և Դաւիդօվիչին երկու տարվայ աքսորի, Նայդան անմեղ է ճանաչված։

ԱՐԺԷՍԻՐԱԶ, 19 փետրվարի։ (Վոլֆ.)։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ կօնֆերենցիան ընդունեց՝ խմբագրական յանձնաժողովի բանկ հիմնելու մասին մշակած նախագծի յօդուածները։

ԿԻԵՎ, 19 փետրվարի։ Դէմիեվկա արուարձանում, պոստային գրասենեակը մտան 3 ինտելիգենտ 3 զինված անձինք և գողացան 8000 րուբլի։ Մուտքը պաշտպանողները թոյլ չը տուին մնացած հոգուն մտնել գրասենեակի կառավարչի մօտ։

ՊԱՐԻԶ, 19 փետրվարի։ Մամուլը մեծ բաւականութեամբ ընդունեց կօնֆերենցիայի այն վճիռը, թէ պէտք է միաժամանակ քննել բանկի կառուցման և Մարրօկօյի ոստիկանութեան կազմակերպութեան հարցերը։ Ֆրանսիան մտադիր չէ զիջել բանկի կառուցման հարցում, մինչև որ վերջնականապէս չը պարզվի Գերմանիայի՝ դէպի ոստիկանութիւնը ունեցած վերաբերմունքը։ Գերմանական պատւիրակների՝ բանկի հարցը քննելու վերաբերմամբ ունեցած վարմունքը նպաստում է կասկածի մեծանալուն։ Անսովոր ուժեղ ցիկլոնը մեծ աւերմունքներ գործեց Մադագասկարում։

ՊԼՕՑԿ, 19 փետրվարի։ Այսօր, ցերեկվայ ժամի 2-ին թատրոնում նշանակված էր նախընտրողական ժողով։ Ժողովից առաջ բեմի տակ գտնված է մի ռումբ։

ՄՕՍԿՎԱ, 19 փետրվարի։ Մի քանի գործարանատէրեր հրաժարվում են սկզբներում բանւորներին խոստացած զիջումներից—բանւորավարձի, և բանւորական օրի տեւողութեան վերաբերմամբ։ Քաղաքապետը կանչեց իր մօտ գործարանատէրերի ներկայացուցիչներին և մատնացոյց արեց, որ անիրև է այդպիսի վերաբերմունքը նախազգուշացնելով, որ իշխանութիւնները այդ բանում աջակցել չեն կարող։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի։ Ազնուականների ժողովարանի դահլիճում կայացաւ Պետերբուրգի Համառուսական Առևտրա-Արդիւնաբերական Միութեան բազմամարդ ժողովը, Բէլիաէւի նախագահութեամբ։ Ներկայ էին 6000 հոգի։ Վօլկօվի առաջարկութեամբ միաձայն ընդունված է հետևեալ վճիռը.—«Ռուսաստանի բարեկեցութեան չափը կախված է հոկտ. 17-ի մանիֆէստում տրված ազատութիւնից, զետեղելով նրան հիմնական օրէնքների մէջ։ Հեռու որ և է օրինականութիւնից երկրի կառավարութեան ներկայ եղանակները տանում են Ռուսաստանի բարեկեցութիւնը վերջնական կորուստի և այլ ևս չեն կարող տանելի լինել, առանց ծայրայեղ վտանգի դինաստիայի համար։

ԹԷՀՐԱՆ, 19 փետրվարի։ Կառավարութիւնը բանակցութիւններ է վարում կօնցեսսիօների հետ-պարսից մասի—Մէշէդից մինչև Ասխաբաթի ճանապարհի վերաշինութեան համար, որ կը դիւրացնէ ապրանքների տեղափոխութիւնը Կասպիական շրջանի, Խօրասանի և Աւղանիստանի միջև։ Բժիշկ Զապլատինսկին, ու անցել էր Սէիստանով, գտնում է, որ ժանտախտը թուլանում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի։ Պաշտօնական։ Վերջին ժամանակներս, պարբերական հրատարակութիւնների մի քանի թերթերում լոյս տեսան յօդուածներ՝ մօտակայում պետական գինու պահեստները փակելու և պետական խմիչքները մասնաւոր վաճառականներին ծախելու մասին, որոնք գանձարանից ստանալու են զիջում 10$^0/_0$-պետական վաճառման գնի հետ համեմատած։ Ֆինանսների մինիստրութիւնը անհրաժեշտ է համարում դրականապէս յայտնել, որ՝ ոչ պետական գինու պահեստների փակման և ոչ պետական խմիչքները 5 մասնաւոր գինեվաճառներին ծախելու մասին մինիստրութեան մէջ հարց չէ բարձրացած։

ՄԻՆՍԿ, 19 փետրվարի։ Սիօնիստների կենտրոնական բիւրօն իր հետևողներին արձակած հրամանագրով առաջարկում է կազմակերպվել և մասնակցել նախընտրական ագիտացիային ընտրելու համար հրեայ պատգամաւորներ։

ԻՐԿՈՒՏՍԿ, 16 փետրվարի։ Անցաւ Կուրօպատկինը։

ՍԱՄԱՐԱ, 19 փետրվարի։ Անցաւ Լինևիչը։

ԿԱԶԱՆ, 19 փետրվարի։ Համալսարանի խորհուրդը վերջնականապէս անկարելի գտաւ պարապմունքները վերսկսել ներկայ պայմաններում։ Ուսման ծախքերը վճարած ուսանողներին արձակուրդ է տրվում մինչև Օգոստ. 20-ը։ Վճարի ժամանակամիջոցը կը շարունակվի մինչև Ապրիլի 1-ը։

ՌԻԳԱ, 19 փետրվարի։ Բռնված են Ֆալզէրի գործարանի գրասենեակը կողոպտող խմբի գլխաւորը և մասնակցողներից մէկը։ Երկուսն էլ խոստովանեցին իրանց յանցանքը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԻՆՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ն. Գ. ՂԱՐԱԳՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՈԿ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԴՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համաճարակի ([illegible]) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 70—150

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամեն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկևիչեա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 47—100

Բ Ժ Ի Շ Կ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 94—300

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 54—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բուխչևսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11.
(ա. օ.) 7—20

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.)43—26

ՀԱՍՏԱՏ ԱՂԲԻՒՐԻՑ
Նրանք, որոնք մատնացոյց կանեն, կը ստանան քառորդ մասը այն գումարի, որը կը վերադարձնվի։ 2—3

IX ԴԱՍԱՏՈՒՆ ԱՒԱՐՏԱԾ ՄԻ
Վարժուհի ցանկանում է պարապել փոքր դասարանի աշակերտների և աշակերտուհիների հետ ռուսերէնից, թուաբանութիւնից և հայերէնից։ Հասցէն Тифлисъ, Полицейская ул. д. Парешева № 30 կամ «Մշակի» խմբագրատանը։ 3—3

ԼԵՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.։
Դիմել՝ «Գուտտէմբերգ» գրախանութը, Թիֆլիս. նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր։
14—15

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10$^0/_0$—յատկացրված է հայ արկածեալների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկէվիչի փողոց, № 13։ (հ.կ.ե.) 11—29

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ
(Արտատպած «Մուրճից»)
Օտար խօսքերի բառթերթով, մօտ 80—90 երես, գինը 15 կոպէկ, քանակով գնողներին զիջում կը լինի։
Դիմել՝ Թիֆլիս, «Մուրճի» խմբագրատունը, Գուտտենբերգ և այլ հայ գրավաճառանոցները։ 8—6

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 08 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 11 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 12 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

27 ին փետրվարի (12-ին մարտի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, «Memphis» շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանգհայ, (Չինաստանում), Վլադիվօստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում, թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնից

Ի նկատի ունելով պ. գեներալ-նահանգապետի պահանջը՝ ներկայացնել դռնապան թէ ունեցող և թէ չունեցող տանտէրերի ցուցակները, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է պ. պ. տանտէրերին, կառավարիչներին և տների կապալառուներին, որ այդ ցուցակները ներկայացվելու են այս յայտարարութեան օրից հինգ օր յետոյ, ուստի և վարչութիւնը իր պարտքն է համարում յիշեցնել այն տանտէրերին, կառավարիչներին ու կապալառուներին, որոնք դեռ չունեն թաղային լիազօրների ձեռքով ցուցակագրված դռնապաններ, պէտք է շտապեն կատարելու պ. գեներալ-նահանգապետի պարտադիր որոշումը՝ սպառնացող տուգանքից ազատ մնալու համար։

Ծանօթութիւն. Դռնապանների հարցին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնների համար պէտք է դիմել թաղային լիազօրներին կամ քաղաքային վարչութեան (շինարարական բաժանմունքում, քաղաքը մաքրելու բաժին)։

ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԱՍՑԷՆԵՐԸ.

1 ք. մ.—Մ. Ն. Աթաբէկօվ (Գրիբոյեդօվսկայա, № 23), 2 ք. մ.—Ի. Ի. Թերգիբաշեվ (Ճաւճաւաձեվսկայա, № 16), Տ. Ս. Տէր-Սիմօնեանց (Մթացմինդսկայա, № 1), Դ. Ի. Եակիմովիչ (2-րդ Պարալլելնայա. № 12), Ե. Դ. Կոտակեչիշօվ (Սուդեբնայա, № 34), 3 ք. մ.—Գ. Դ. Տէր-Նիկողոսօվ (Գրաֆսկայա, № 7), 4. ք. մ.—Ի. Ի. Մարգարօվ (Գանօվսկայա, № 23), 5 ք. մ.—Ա. Պ. Զախմախսազեանց, (Արխիվնի պեր. № 12), 6. ք. մ.—Եգիզարօվ Հուսէյին-բէկ (Վօրօնցօվսկայա, սեփ. տ.), Գ. Ե. Բեժոյեվ (Վօրօնցօվսկայա, № 109), 7 ք. մ.—Բժ. Իգիթեան Ի. Ս.,(Հալաբար, քաղաքային հիւանդանոց), 8 ք. մ.—Դ. Տոյիձէ, (Գօնչարնայա փող. № 28), 9 ք. մ.—Ն. Ա. Գրիկուրօվ (Միխայլօվսկայա, № 37), Լ, Ա. Մամուլօվ (Ռազեզժայա, սեփ. տ.), 10 ք. մ.—Ի. Ի. Բրօն-ֆօն-Բրեննէր (Միխայլօվսկայա, № 161), և Դ. Ի. Էմինօվ (Միխայլօվսկայա, № 160.)

Նախալօվկա,—Խէչօ Խօջայեվ (Աննենսկայա և Ռոստօվսկայա փող. անկիւն, մօլոկանների գերեզմանատան մօտ), Ա. Բակրաձէ (Ստավրօպօլսկայա, սեփ. տ. № 5)։

2—2

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ե. ԹՕՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1906 Թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1. եր. Օրացոյց—կազմեց Ն. ք. Նիկողոսեան. ընտիր մտքեր. առածներ. հանելուկներ, շուտասելուկներ II, երես. 1) Ոսկի դարի շուրջը—Սլաքի, 2) Նշմարներ Հայաստանի աշխարհագրութիւնից—Մ. Վ. Քաջբերունու, 3) Օրվայ հարցեր—Բժ. Ա. Բուդաղեանի, 4) Ինչպէս օգնել կարծեցեալ մեռածներին բժշկ. Բ. Նաւասարդեանի, 5) Առողջապահական գիտելիքներ—Դ-ր Բեկլամի, 6) Կինը և տղամարդը—Տիկ. Հրանոյշի, 7) Հրատապ հարցերի շուրջը—պրօֆ. Վ. Զոմբարտի, 8) Քաղաքատնտեսական զրոյցներ—Ե. Թօփչեանի, 9) Ինչպէս են խարդախում մեր սնունդը—Քիմիկոս Կ. Աբովեանի, 10) Ինչպէս են խմորեղէններ պատրաստում—Մօլոխովեցի, 11) Ինչպէս են քաղցր խմիչքներ պատրաստում, 12) Երեխաներին ինչով պէտք է կերակրել—Դոկտ. Կ. Փաշայեանի. 13) Տէրսիմ և տերսիմցիներ—Անդրանիկի. 14) Եւրոպացիների կարծիքը հայերի մասին—Ե. Թ., 15) Հակայ կենդանիներ—Վ. Լունկևիչի, 16 Զարմանալի բոյսեր—Ա. Քիշմիշեանի, 17) Կայծակ և ելեկտրականութիւն— Վ. Լունկևիչի, 18) Հողը և նրա տեսակները—Գ. Ղազարեանի, 19) Ինչպէս պէտք է հաւ պահել—Բօմերի, 20) Հոգեշահ զրոյցներ—Պետրով քահ., 21) Թիւրքահայերի վարչական կազմը, 22) Րաֆֆու յիշատակարանից, 23) Տարօրինակ գիւտեր, 24) Գիտական խաղեր. 25) Թուաբանական խաղեր ու խնդիրներ, 26) Ընտիր հատուածներ, 27) Հայկական պատմ. էջերից, 28) Օգտակար խորհուրդներ, 29) Վանայ երգերից, 30) Զուարճալի հատուածներ, 31) Հետաքրքրական, 32) Ժողովրդական երգերից. 33) Աշուղական հարցումներ, 34) Բանաստեղծական նշմարներ, 35) Նմուշներ Օսմ. բանաստեղծութիւնից, 36) Մեծաղի աշխարհից, 37) Որոնք են մարդու 3 պարտականութիւնները, 38) Րաֆֆու գրուածքներից որն է ամենալաւը, 39) Ի՞նչ է երջանկութիւնը և ինչպէս գտնել նրան, 40) Այլ և այլք։

Տ ա խ տ ա կ «Ռուսահայ խմբագիրներ» Առանձին յաւելուած գրքոյկ «Ժողովածու» (1. Արձակ բանաստեղծութիւններ Ա. Ահարոնեանի և Վ. Փափազեանի։ 2. Նմուշներ վրաց գրականութիւնից։ 3. Մրցանակաբաշխութիւն)։ ՄՐՑԱՆԱԿ 50 կտոր գիրք։

Պատի օրացոյցի գինը 50 կոպ.։
ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Օրացոյց Հայրապետ. ամեն. հայոց. Ազգային հաստատութիւններ.—Ն. ք. Նիկողոսեանի. Չափեր և նրանց համեմատութիւնը։ Խնայողական գանձարաններ և մարկաներ։ Բանւորների համար։ Իրաւագիտական տեղեկութիւններ։ Մուրհակ, Դրօշմատուրք։ Բնակարանների հարկ։ Պոստ, հեռագիր և հեռախօս։ Երկաթուղի պօստային ճանապարհներ։ Նաւագնացութիւն։ Անցագիր։ Զինուորագրական կանոններ։ Բ ժ շ կ ա ր ա ն. բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի. Ինչպէս են խարդախում մեր խմիչքները—քիմիկոս Կ. Աբովեանի։ Ջուրը—Դոկտ. Ա. Յակոբեանի։ Կեանք և մահ—Բժ. Ա. Բուդաղեանի։ Գիրք և առողջապահութիւն—Դոկտ. Կ. Փաշայեանի։ Մարդու զգեստը—Դոկտ. Ջէյլէրի։ Շաքարը արբեցողութեան դէմ—Դոկտ. Գօլովինի։ Ժամանակակից հարցերի շուրջը. Ինչ է բարեգործութիւնը— պրօֆ. Շմօլլէրի։ Ազգայնական հարցի մասին —պրօֆ. Վ. Զոմբարտի։ Մրցման հետևանքը տնտեսական կեանքում—Ֆր. Էնգելսի։ Գիտութիւն և ինքնակրթութիւն—Ե. Թօփչեանի։ Դրամագլուխ կամ կապիտալ—պրօֆ. Կարիչևի։ Ժամանակակից կնոջ վիճակը—տիկ. Հրանոյշի։ Արիութիւն և զանուութիւն—պրօֆ. Մանտեգացցայի։ Ինչ է փողը—Ե. Թօփչեանի։ Գիտական. Օդային ճանապարհորդութիւն—Վ. Լունկևիչի. Արիւնը։ Բոյսերի կեանքը—պրօֆ. Բօրօդինի։ Երկրագործական խորհուրդներ—Գ. Ղազարեանի, Զուարճալի մաթեմատիկութիւն (պատկերներով)։ Կենսագրութիւններ. Յով. Արքեպ. Արղութեանի, Սունդուկեանի, Պռօշեանի և Շիրվանզադէի։ Օգտակար հասցէներ։ Տնային խորհուրդներ։ Գիտական նորութիւններ։ Օգտակար գիտելիքներ։ Հետաքրքրական։ Ծիծաղական։

Գրպանի օրացոյցի գինը 20 կոպ.։
Գ ո ւ մ ա ր ո վ գ ն ո ղ ն ե ր ի ձ ե ռ ն տ ու զ ե ղ ջ։

Սեղանի «Լոյս» օրացոյց հանդէսը մեզնից անկախ պատճառով այս տարի լոյս չէ տեսել։ «ԼՈՅՍ» ՀԱՆԴԷՍԸ ԱՄՍԱԳԻՐ դարձնելու համար՝ դիմում է արւած պատշաճաւոր իշխանութեան։

Դիմել՝ Тифлисъ Мадатовская ул. 5. Е. Топчяну. 9—10

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15